ՍԻՍԱԿԱՆ-Ի ԿՈՏԱԿ ԵՒ ԱՐՑԱԽԻ ՀԱՐԱՒԱՅԻՆ ՄԻՍ ԳԱՒԱՌՆԵՐԻ ՏԵՂՈՐՈՇՈՒՄՆ ԸՍՏ «ԱՇԽԱՐՀԱՑՈՅՑ»-Ի

Ալեքսան Յակոբեան

Յօդուածի հիմքում ընկած է հեղինակի «Արցախի Սիսական-ի Կոտակ գաւառի տեղորոշման խնդիրը» զեկուցումը ՀՀ Գիտութիւնների ազգային ակադեմիայում 2008 թ. ապրիլի 10-11-ին անցկացուած գիտաժողովում՝ նուիրուած ականաւոր պատմաբան, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս, երջանկայիշատակ Սուրէն Տիգրանի Երեմեանի 100-ամեակին:

Մեծ Հայքի տասներորդ՝ Արցախ նահանգի 12 գաւառներից երկուսի՝ Հարջլանքի եւ Պիանքի յիշատակութիւնը հայկական աղբիւրներում սահմանափակւում է բացառապէս՝ իր սկզբնական վիճակում Մովսէս Խորենացուն վերագրուող «Աշխարհացոյց»-ի երկու գաւառացանկերով՝ Բուն Աղուանք երկրին Ե դ. առաջին կէսում միացուած ուտիք-արցախեան 20 եւ Մեծ Հայքի Արցախ աշխարհի 12 գաւառների թուարկումներում: Իսկ միւս տասի, այդ թւում՝ Սիսական-ի Կոտակի տեղորոշումները մասնագէտները հնարաւորութիւն ունեն կատարել աւելի ծաւալուն աղբիւրագիտական հիմքերով: Սակայն բազմաթիւ դէպքերում սկզբնաղբիւրների վկայութիւնների իմաստի անմիանշանակութեան հետեւանքով Արցախի գաւառների տեղադրութեան խնդրի լուծումները դառնում են ոչ դիւրին ու երբեմն վարկածային՝ պահանջելով «Աշխարհացոյց»-ի եւ մնացեալ աղբիւրների տուեալների ամեն անգամ նոր, աւելի ուշադիր ընթերցանութիւն եւ աւելի զգոյշ օգտագործում: Այդպիսի մի համակարգուած քննութեան շնորհիւ ակադ. Սուրէն Երեմեանին յաջողուեց իր «Հայաստանը ըստ «Աշխարհացոյց»-ի» մեծարժէք ուսումնասիրութեան մէջ (Եր., 1963) հաստատագրել Սիսական-ի Կոտակ գաւառի տեղորոշումը Արցախ նահանգի ոչ թէ արեւմտեան, ինչպէս համարւում էր մինչ այդ, այլ ամենահարաւային հատուածում, Արցախեան լեռնաշղթայից մինչեւ Արաքս գետի ափերն ընկած տարածքում:

«Աշխարհացոյց»-ի ինչպէս վերը նշուած, այնպէս էլ մնացեալ գաւառացանկերում երկու-երեք (երբեմն՝ չորս եւ աւելի) անուններից բաղկացած թուարկման խմբաշարերի բացայայտումը[1] թոյլ է տալիս նկատել, որ վաղմիջնադարեան հայ աշխարհագէտ-հեղինակը Արցախ նահանգի նկարագրութիւնն սկսելով նրա՝ ըստ ամենայնի ինչ-որ իմաստով գլխաւոր Միւս Հաբանդ գաւառից՝ այնուհետեւ տալիս է (թերեւս, իր առջեւ փռուած Մեծ Հայքի մի հինաւուրց քարտէզի, կամ ճանապարհացոյց-իտիներարիաների հիման վրայ կազմուած երկրագրական սխեմայի հետեւելով[2]) արցախեան հարաւային եւ կենտրոնական գաւառների հետեւեալ մէկընդմէջ խմբերով թուարկումները. Վայկունիք → Բերձոր // Մեծ Իրանք → Մեծ Կուանք → Հարջլանք // Մուխանք → Պիանք → Պածկանք → Սիսական-ի Կոտակ (դրանից յետոյ նշւում են Քուստ-ի Փառնէսը եւ Կողթը ամենահիւսիսում)[3]: Իսկ Բուն Աղուանքին միացուած ուտիք-արցախեան գաւառների թուարկման («Աշխարհացոյց»-ի միայն համառօտ խմբագրութեան գրչագրերում պահպանուած[4]) մէկընդմէջ խմբերն այսպիսին են. Հիւսիսային մասում՝ Շակաշէն → Գարդման // Քուստ-ի Փառնէս → Կողթ // Աղուէ → Տուս-Քուստակ, կենտրոնական եւ հարաւային մասերում՝ Ուտ-Ռոստակ → Ռոտ Պացեան // Մեծ Կուանք → Մեծ Իրանք → Պիանք → Հարջլանք // Պածկանք → Մուխանք // Վայկունիք → Բերձոր // Փոքր Հաբանդ → Սիսական-ի Կոտակ → [Տրի][5] → Առան-ռոտ[6]:

---

1 Ուսումնասիրողները նկատել են այդ օրինաչափութիւնը մասնաւորապէս Վասպուրական աշխարհի աշխարհացոյցեան նկարագրութեան մէջ. Հ. Հիւբշման, *Հին Հայոց տեղւոյ անունները*, Թարգմանեց Հ. Բ. Պիղէզիկեան, Վիեննա, 1907, էջ 224; **Н. Адонц**, *Армения в эпоху Юстиниана. Политическое состояние на основе нахарарского строя.* СПб., 1908 (վերահրատարակութիւնը՝ Եր., 1971), էջ 315; **Բ. Ց. Ցարութիւնեան**, *Մեծ Հայքի վարչա-քաղաքական բաժանման համակարգն ըստ «Աշխարհացոյց»-ի*, Մաս Ա, Եր., 2001, էջ 367:

2 Հմմտ. **Ս. Տ. Երեմեան**, *Հայաստանը ըստ «Աշխարհացոյց»-ի (Փորձ VII դարի հայկական քարտէզի վերակազմութեան ժամանակակից քարտէզագրական հիմքի վրայ)*, Եր., 1963, էջ 32, 45; **Բ. Ց. Ցարութիւնեան**, *Մեծ Հայքի վարչա-քաղաքական բաժանման համակարգն*, էջ 32, 45: Մանրամասն համադրելով ուտիք-արցախեան գաւառների թուարկումների հերթականութիւնը (մի կողմից՝ երկու աշխարհներում, միւս կողմից՝ Բուն Աղուանքին միացուած վիճակում), ինչպէս նաեւ օգտուելով «Աշխարհացոյց»-ի՝ մեր կողմից պատրաստուող գիտա-համեմատական բնագրից՝ փորձել ենք վերականգնել մեծ հաւանականութեամբ մեր հեղինակի ձեռքի տակ եղած, ճանապարհացոյց-իտիներարիաների եւ այլ նիւթերի հիման վրայ կազմուած Մեծ Հայքի երկրագրական քարտէզ-սխեմայի մի հատուածի պատկերը (տե՛ս յօդուածի վերջում):

3 *Աշխարհացոյց* Մովսեսի Խորենացւոյ. Ցաւելուածովք նախնեաց, Վենետիկ-Ս.Ղազար, 1881, էջ 33; *Армянская география VII века по Р. Х.*, Текст и перевод, издал **К. П. Патканов**, СПб., 1877, էջ 19; **Ա. Գ. Աբրահամեան**, *Անանիա Ծիրակացու մատենագրութիւնը*, Եր., 1944, էջ 350; **Մովսէս Խորենացի**, *Աշխարհացոյց*,– «Մատենագիրք Հայոց», հտ. Բ, Ե դար, Անթիլիաս, 2003 (այսուհետեւ՝ ՄՀ), էջ 2153, 2172, 2188: Համառօտ խմբագրութեան շուրջ երեք տասնեակ գրչագրերում ուտիք-արցախեան գաւառանունների տարընթերցումները տե՛ս **Բ. Ցարութիւնեան**, *Հայոց Արեւելից կողմերի վարչական բաժանումն ըստ «Աշխարհացոյց»-ի*,– «Ծուշին Հայոց քաղաքակրթութեան օրրան»: Ծուշիի ազատագրման 15-րդ տարեդարձին նուիրուած գիտաժողովի նիւթեր. Ստեփանակերտ-Ծուշի, 2007, Եր., 2007, էջ 22-24:

4 «Աշխարհացոյց»-ի ընդարձակ խմբագրութեան՝ մեզ հասած միակ գրչագրի (Վենետիկի Մխիթարեան միաբանութեան մատենադարանի ձեռ. թիւ 1276) բնագրի ուշադիր համեմատութիւնը երկի համառօտ խմբագրութեան ձեռագրերի հետ թոյլ է տալիս նկատել, որ առաջինի այս հատուածում մի բաւականին անփոյթ գրչի վրիպման հետեւանքով կորսուած է շուրջ երկու պարբերութիւն, առաջինը՝ Բուն Աղուանքի նկարագրութեան վերջում, երկրորդը՝ Մեծ Հայքի նկարագրութեան սկզբում: Այդ ակնյայտ գրչական վրիպման հետեւանքով նախագաղափար օրինակի «...ընդ որոյ մէջ՝ գետն Սէբոջ դէպ ի հարաւոյ *[թերեւս պէտք է շարունակուէր՝ բաժանէ... եւ այլն]*» հատուածին յաջորդում են «ըստ Փոքր Հայոց: Ունին Մեծ Հայք...» բառերը (ՄՀ, էջ 2151, նախ. 55. այստեղ եւ ստորեւ բերուած բնագրերում բոլոր ընդգծումները մերն են): Համառօտ խմբագրութեան բնագրի Մեծ Հայքի նկարագրութեան առաջին պարբերութեան մէջ վերջին երեք բառերով եւ շաղկապով սկսուող նախադասութեանը («Եւ ունին Մեծ Հայք...») նախորդում է այսպիսի նախադասութեան աւարտ. «...մինչեւ ցնոյն դարձուածք Եփրատայ ի հարաւ կոյս: *[տարբ.* հարաւակոյս*]*» (ՄՀ, էջ 2171, նախ. 51; էջ 2187, նախ. 74): Ամենայն հաւանականութեամբ՝ վենետիկեան գրչագրի նախագաղափար օրինակի (եւ ըստ այդմ՝ «Աշխարհացոյց»-ի բնօրինակի) այս հատուածում եղել է՝ «...դարձուածք Եփրատայ դէպ ի հարաւոյ *[փխ* հարաւ կոյս*]*, ըստ Փոքր Հայոց» նախադասութեան աւարտը, որի «դէպ ի հարաւոյ» բառերի նոյնութիւնը Աղուանքի՝ վերը բերուած նկարագրութեան մէջ առկայ հատուածի հետ պատճառ է դարձել մեր խիստ անուշադիր գրչի վրիպման համար:

5 «Աշխարհացոյց»-ի համառօտ խմբագրութեան ձեռագրերում հաւանաբար մի շատ հին գրչական վրիպակի արդիւնքում այս գաւառի անունը բացակայում է, սակայն նրա հետքերը մի քանի գրչագրերում պահպանուել են յաջորդ՝ Առանռոտ (Ասոոտ) գաւառանուան սկզբին կցուած ՍՏ կամ ՈՏ տառերի տեսքով. տե՛ս **Բ. Ցարութիւնեան**, *Հայոց Արեւելից կողմերի վարչական բաժանումն ըստ «Աշխարհացոյց»-ի*, էջ 23:

6 **Ա. Գ. Աբրահամեան**, *Անանիա Ծիրակացու մատենագրութիւնը*, էջ 348; ՄՀ, էջ 2186-2187: Տեղին նշենք, որ Մեծ Հայքի 12-րդ՝ Ուտիք նահանգի գաւառների թուարկումը «Աշխարհացոյց»-ը տալիս է դէպի կենտրոն ուղղուած հետեւեալ խմբաշարերով. Արաև-ռովտ - Տոի - Ռոտ Պացեան,– Աղուէ - Տուչքատակ [=Տուս-Քուստակ] - Գարդման - Ծակաշէն - Ուտի Առանձնակ (տե՛ս *Աշխարհացոյց* Մովսեսի Խորենաց-

© National Library of Armenia

Չնայած «Աշխարհացոյց»-ում ներկայացուած այս՝ ըստ ամենայնի բաւական յստակօրէն Արցախի հարաւը մատնանշող պատկերին՝ դեռեւս Ղեւոնդ Ալիշանի եւ Մակար Բարխուդարեանցի կողմից Սիսական-ի Կոտակն այնուամենայնիւ տեղորոշւում էր Տրտուի վերնահովտում, հետագայ Մար գաւառի տարածքում, «յոլորտս ծովուն Գեղամայ»[7]: Մեր օրերում այս «հիւսիսային» տեղորոշումը փորձում է հիմնաւորել Սլաւա Սարգսեանը[8]: Այդ կարծիքը փաստարկւում նրանով, որ զարգացած եւ ուշ միջնադարում Տրտուի վերնահովիտը կամ Մար գաւառը իրօք շատ յաճախ են «Փոքր Սիւնիք» կոչուել[9], իսկ, ինչպէս յայտնի է, «Սիսական-ի Կոտակ» իրանական անուանաձեւը հայերէն բառացի թարգմանութեամբ հէնց «Փոքր Սիսական», այսինքն՝ «Փոքր Սիւնիք» է նշանակում[10]: Այլ հետազօտողներ, սկսած նոյն Ղեւոնդ Ալիշանից եւ Մակար Բարխուդարեանցից, Մարում կամ նրա արեւելեան մասում են տեղորոշել աշխարհացոյցեան Վայկունիք գաւառը[11]:

Վերջինիս առումով՝ մեր նախորդ աշխատանքներում փորձել ենք ցոյց տալ, որ աւելի քան բաւարար աղբիւրագիտական հիմքեր կան աշխարհացոյցեան Արցախի Վայկունիք (կամ Վակունիք, Վակունիս, իսկ Մովսէս Դասխուրանցու մօտ պահպանուած Դիզակի իշխանութեան ութ գաւառների ցուցակում՝ Վերին Վայկունիք) գաւառը հաստատապէս տեղորոշելու Հակարի գետի Շալուայ ձախ օժանդակի հովտում, Արցախը Սիւնիքից բաժանող նրա միւս՝ Հոչանց օժանդակի եւ Արցախեան լեռնաշղթայի միջեւ, հիւսիսում մինչեւ Հակարիի եւ Տրտուի ջրբաժան Բեւեռաթափի (յորջորջուած՝ Միխթոքեան) լեռները[12]: Մանրամասնենք, որ այստեղ իր անունը ցայսօր անփոփոխ պահպանած Վաղազին շէն գիւղի (ԼՂՀ Քաշաթաղի շրջանի Բերձոր շրջկենտրոնից 35 կմ հիւսիս) մերձակայքում գտնուած Վաղազնոյ գետը Վակունիս բնակավայրի հետ միասին է հանդէս գալիս դեռեւս Գտչավանքի 1246 թ. շինարարական վիմագրում. «Վակունիս ի Վաղազնո գետովն»[13]: Դրա շնորհիւ ա-

11 Հ. Ղ. Ալիշան, *Արցախ*, էջ 10, 14-16; Մ. եպս. Բարխուտարեանց, *Արցախ*, էջ 402-403: Տե՛ս նաեւ **Ս. Տ. Երեմեան**, *Հայաստանը ըստ «Աշխարհացոյց»-ի*, էջ 82; *Դիւան հայ վիմագրութեան*, պրակ V, *Արցախ*, Կազմեց Ս. Գ. Բարխուդարեան, Եր., 1982, էջ 8, 112, 217:

12 Տե՛ս Ա. Ցակոբեան, *Հակարիի վերնահովտի նորայայտ վիմագրերը*,– «Հանդէս ամսօրեայ», ՃԺԲ. տարի, Վիեննա, 1998, էջ 293, 309, ծան. 55; նոյնի՝ *Գտչավանքի շինարարական արձանագրութիւնը եւ հարաւային Արցախի եպիսկոպոսութեան սահմանները*,– «Հանդէս ամսօրեայ», ՃԺԳ. տարի, Վիեննա, 1999, էջ 266; նոյնի՝ *Կենտրոնական Արցախի Հարջլանք եւ Պիանք գաւառների տեղադրութիւնն ըստ «Աշխարհացոյց»-ի*,– «Ծուշին Հայոց քաղաքակրթութեան օրրան»..., Եր., 2007, էջ 44-45:

13 Ա. Ցակոբեան, *Գտչավանքի շինարարական արձանագրութիւնը*, էջ 250-256, 261: Այս վի-

ռաջանում է Վակունիս տեղանունը Վաղազինից 4 կմ դէպի հիւսիս-արեւմուտք (Շալուայ օժանդակի Նաղդալի յորջորջուած, ներկայումս Մաղդանց կոչուող վտակի դիմացի ձորալանջին) Բէյանիս յորջորջմամբ գիւղանուան հետ համադրելու հնարաւորութիւնը[14]: Այս Վակունիսից 9 կմ դէպի հիւսիս-արեւմուտք գտնուող եւ ներկայումս էլ շէն Արախիշ գիւղում (որի անունը ԺԹ-Ի դդ. վերածուել էր Արիքլուի, թէպէտ գիւղի առջեւում ռազմական մեծամասշտաբ քարտէզներն արձանագրում էին Արախշուն հանդամասը) ԺԶ դ. ընդօրինակուել են երկու ձեռագրեր, եւ նրանցից մէկում գրչութեան տեղը նշուած է՝ «ի յերկիրն Վ[ա]կունիս, ի գ[ե]աւղս, որ կոչի Արախիշ»[15]: Վերջին գիւղանունը առանց սկզբի ձայնաւորի տարբերակով յիշատակուած է 1653 թ. «ի յերկիրս Մարա, ի գեօղն Մրոս» ընդօրինակուած ձեռագրում, որի ստացող Թադէոս երէցը կոչուած է՝ «բնական ի յերկրէն Մաղաւզայ, ի գեղջէն Բախիշոյ»[16]: Ուշմիջնադարեան այս Մաղաւուզ (նաեւ՝ Մաղայոզ, Մաղայուզ) գաւառի տեղորոշումը Շալուայի գետահովտում կասկածի ենթակայ չէ, քանի որ յիշատակարաններում ու վիմագրերում վկայուած են նրա Արտաշիքի (նաեւ՝ Արտաշիպի, ներկայիս շէն՝ Արտաշաւի, Վաղազինից 2 կմ հարաւ)[17] եւ Բազմատուս (հմմտ. Բիւլիւլդուզ [<Բիւրատուս?] յորջորջումով գիւղը՝ եւս 6 կմ հարաւ)[18] բնակավայրերը: Ըստ ԺԶ դ. մի յիշատակարանի՝ «Վակունիս երկրի» Հովատուս գիւղը (մի երկրորդ ձեռագրի յիշատակարանում՝ Հաւատուս) իր երկրորդ անունով կոչւում էր Հընկուզակ-Հինգուզակ[19], որը համադրելի է թւում Կոզլու գիւղատեղիի յորջորջմանը՝ Արտաշաւիից 5 կմ հարաւ-արեւմուտք (պրսկ. «գōզ» - «ընկոյզ» բառից[20]):

մագրի նախորդ՝ Եսայի Հասան-Ջալալեանց կաթողիկոսի (ՄՄ ձեռ. թիւ 7821, թերթ 8ա-բ, թիւ 9923, թ. 11ա), Խաչիկ Դադեանի (ՀՊՊԿԱ, ֆոնդ 319, ցուց. 1, գործ 107, թ. 21բ-22ա), Մակար Բարխուդարեանցի (*Արցախ*, էջ 80-81), Սեդրակ Բարխուդարեանի (*Դիւան հայ վիմագրութեան*, պրակ V, *Արցախ*, էջ 182-183) ընթերցումները պէտք է համարել հնացած:

14 Հմմտ. Ա. Ցակոբեան, *Գտչավանքի շինարարական արձանագրութիւնը*, էջ 266-267:

15 ՄՄ, ձեռ. թիւ 4181 (Աւետարան, 1568 թ.), թ. 257ա: Արախիշի նոյն Ս. Աստուածածին եկեղեցում եւ նոյն Կարապետ գրչի կողմից 1578 թ. ընդօրինակուած միւս Աւետարանը ՄՄ թիւ 2537 ձեռագիրն է (յիշատակարանը՝ թ. 288ա-բ):

16 ՄՄ, ձեռ. թիւ 3647 (Աւետարան, գրիչ՝ Մարտիրոս Խնձորեկցի), թ. 342բ:

17 ՄՄ, պատառիկ թիւ 1015, թ. 3բ («ի երկիրս Մաղայուզ, ի գուղս Արտայշիքի»); Մ. եպս. Բարխուտարեանց, *Արցախ*, էջ 140 («Ի երկիրս Մաղայոզ, ի գեղս Արտաշիպի»): Հմմտ. *Հայերէն ձեռագրերի յիշատակարաններ. ԺԷ դար*, հտ. Ա., Եր., 1974, էջ 561, հտ. Բ, Եր., 1978, էջ 699:

18 *Դիւան հայ վիմագրութեան*, պրակ IV, *Գեղարքունիք*, Կազմեց Ս. Գ. Բարխուդարեան, Եր., 1973, էջ 129 (Գեղաքունիքի Վանքով խարաբայ կոչուող եկեղեցուց հիւսիս-արեւելք ընկած օրորոցաձեւ տապանաքարի 4-տողանոց վիմագրում. «Սբ. խաչս բարէխօս Հաճուքին ... երկրէն Մաղաւուզոյ, ի գեղչէն Բազմայտուսոյ. թվին ՌԾԸ [=1659 թ.]»); պրակ V, *Արցախ*, էջ 56 (Գանձասարի գաւթի արտաքուստ հիւսիսային պատի արեւելեան մասում 7-տողանոց, ներկայումս կորսուած վիմագրում. «Ես՝ Իսուք, տվի Բազմայտվեց նովերին հող ի սբ. ուխտս ... թվ ՋԽԴ [=1495 թ.]»): Վերջին բնագրում յիշուած «նովերի» հետ կարող է կապ ունենալ Բիւլիւլդուզ յորջորջուած ներկայիս շէն Բազմատուս գիւղից 2 կմ հիւսիս բարձրացող սարի անուան «Новыбаш» յորջորջումը ռազմական քարտէզներում (1779,7 մ), եթէ ենթադրենք, որ այն առաջ է եկել հայերէն «Նովի գլուխ» հիմքից:

19 Ցիշատակարանը Քերթ գիւղում գտնուած Աւետարանից 1890 թ. արտագրել է Խ. Դաղեանը (ՄՄ, Կաթող. դիւան, թղթ. 240, վաւ. 134, թ. 1-2. «...գրեցաւ ի գաւառս Վակունիս, ի գե[ւ]ղս, որ կոչի Հովատուս, որ Հընկուզակս անուանի»): Տե՛ս նաեւ *Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց Թաւրիզի*, Կազմեց Հ. Ց. Աճառեան, Վիեննա, 1910, էջ 68 («...գիրեցաւ սբ. Աւետարան ի գեղոյս Հաւատուս կոչի, որ է Հինգուզակս»):

20 Հ. Աճառեան, *Հայերէն արմատական բառարան*, հտ. Բ, Եր., 1973 էջ 130; Գ. Մ. Նալբանդեան, *Պարսկերէն-հայերէն բառարան*, Եր.,

© National Library of Armenia

Մի այլ ենթատեքստում, այն է՝ Կուրի ձախափնեայ Կապաղակ գաւառի Մեծ Սեօգիւթլու գիւղում Մակար Բարխուդարեանցին հանդիպած, «Ծար գիւղաքաղաքում Սարգիս անուն վարդապետի» կողմից Հայոց ՊԼԶ թուին (=1387 թ.) ընդօրինակուած Աւետարանի յիշատակարանում, Վակունիս եւ Ծար գաւառանունները յիշատակուած են կողք-կողքի, որն ուղղակիօրէն ստիպում է բացառել նրանց համադրման հնարաւորութիւնը: Այդ յիշատակարանում «թաթարաց հրոսակների խուժած ժամանակի» մասին բնիկ ծարեցի գրիչը տրտնջում էր հետեւեալը. «Նախ հալածուելով փախայ Վակունիս գաւառ, ապա Ղարաբաղ՝ Ծափանիս գիւղաքաղաք, հուսկ ուրեմն վերստին եկի բնիկ երկիրս Ծար»[21]: Վայկունիքի եւ Ծարի համադրումը նոյնքան բացառող պէտք է համարել նաեւ սկզբնաղբիւրների այն ենթատեքստերը, որտեղ կողք-կողքի յիշատակուած են Ծար գաւառանունը եւ Մաղաւուզը (որի համապատասխանութիւնը աշխարհագրական Վայկունիքին նշեցինք վերեւում): Այդպէս է օսմանեան Սարը-Մուստաֆա փաշայի կողմից 1728 թ. հրապարակուած հրովարտակում, որը Գանձակի («Գեանջայի»), Ծարի («Զարուզիբիլի») եւ Մաղաւուզի հայ բնակչութեանը, մելիքներին ու գեղջաւագներին ծանուցում էր Գանձասարի՝ վախճանուած Եսայի Հասան-Ջալալեանց կաթողիկոսի փոխարէն նրա եղբօր՝ Գրիգոր վարդապետի աթոռակալելու մասին[22]:

1987, էջ 493; *Персидско-русский словарь.* Сост. **Б. В. Миллер**, Москва, 1960, էջ 429:

21 Մ. վրդ. Բարխուտարեանց, *Աղուանից երկիր եւ դրացիք (Միջին Դաղստան)*, Թիֆլիս, 1893, էջ 220:

22 ՀՊՊԿԱ., ֆոնդ 57, ցուց. 1, գործ 4, թ. 1: Հմմտ. Ս. Կարապետեան, *Հայ մշակոյթի յուշարձանները Խորհրդային Ադրբեջանին բռնակցուած շրջաններում*, Եր., 1999, էջ 12; Պ. Զորբանեան, *Քարվաճառի էթնիկ դիմագծի հարցի շուրջ*,– «Մերձաւոր եւ Միջին Արեւելքի երկրներ եւ ժողովուրդներ», XX, Եր., 2001, էջ 220-221:

Ընդ սմին Տրտու գետի վերին հովիտը, ուր աւանդական սխալով տեղադրւում էր Վայկունիք գաւառը (գրականութեան մէջ նաեւ կաղանկատուացի կոչուած Մովսէս Դասխուրանցու «Պատմութիւն Աղուանից» երկում յիշատակուած Վայունիք գիւղանուան հետ զուգորդութեան՝ իրապէս ոչ բաւարար փաստարկով[23]), եւ որը զարգացած միջնադարից կոչւում էր Ծար երկիր կամ գաւառ (իր կենտրոնական, իշխանանիստ բնակավայրի անունից[24]), վաղ միջնադարում անհրաժեշտ է համարել Սիւնիք նահանգի հիւսիս-արեւելեան Սոթք գաւառի մի մասը, ինչպէս գտնում էր դեռեւս Սեդրակ Բարխուդարեանը[25]: Մանրամասնենք, որ Ստեփաննոս Օրբէ-

23 Մովսէս Կաղանկատուացի, *Պատմութիւն Աղուանից աշխարհի*, Քննական բնագիրը եւ ներածութիւնը Վ. Առաքելեանի, Եր., 1983 (այսուհետեւ՝ *ՊԱ*), գիրք Գ, գլ. ԻԲ/ԻԳ/ (այսուհետեւ՝ Գ.իբ/իգ/), էջ 340 (բնագիրն է. «Ատրներսեհ շինէ զբերդն Հանդու եւ զապարանս իւր եդեալ ի գիւղն *[ա գրչագրում* գեղն*]*, որ կոչի **Վայունիք**, ուր եւ բաղանիք արքունական են»): Երկի ձեռագրագիտական մանրամասն քննութիւնը տե՛ս Ա. Յակոբեան, *Մովսէս Կաղանկատուացու «Աղուանից պատմութեան» ձեռագրերը*,– «Բանբեր Մատենադարանի», 15, Եր., 1986, էջ 110-143:

24 Հմմտ. Բ. Ա. Ուլուբաբեան, *Խաչենի իշխանութիւնը X-XVI դարերում*, Եր., 1975, էջ 34; Ս. Կարապետեան, *Հայ մշակոյթի յուշարձանները Խորհրդային Ադրբեջանին բռնակցուած շրջաններում*, էջ 55:

25 **Ս. Գ. Բարխուդարեան**, *Արցախի, Շաքիի եւ Փառիսոսի իշխանութիւնները IX-X դարերում*,– «Պատմա-բանասիրական հանդէս», 1971 թիւ 1, էջ 73 («...Սահլին Կաղանկատուացին կոչում է Սիւնիքի տէր, եւ իրաւամբ, որովհետեւ Վայկունիքը [*իմա՛ Տրտուի վերնահովիտը* - **Ա. Յ.**] միջին դարերում **միշտ Սիւնիքի մաս է համարուել** եւ Ստ. Օրբէլեանը իր ցանկերի մէջ նրա բոլոր գիւղերը Սիւնիքի Սոդք գաւառի վրայ է թուարկել: Ըստ երեւոյթին Վայկունիքը, որը նաեւ Ծար գաւառ եւ Ծարայ երկիր է կոչուել, հէնց այս շրջանից սկսած Սոդքի հետ **մի ամբողջական միաւոր է կազմել**»):

լեանը, օգտագործելով վաղ շրջանի տուեալները (մինչեւ Թ դ. փոփոխութիւնները)՝ Ծարը թուարկում է Տաթեւի վանքին պատկանող եւ Աղուանից երկրին (իմա՛ Արցախին) սահմանակից շրջանների շարքում («Հատանէ եւ զսահման Աղուանից՝ Ըռմբի խոռն, Ծար գաւառ, Աղահէճ, ընդ որ Աղունոյ գետն հատանէ մինչ ի Բարաւազին կամուրջն, եւ Հաբանդ գաւառ»)[26]: Աղբիւրագիտական առումով կարեւոր է, որ դրանից առաջ պատմիչի մօտ բերուած Հայոց Սարգիս Սեւանցի կաթողիկոսի շրջաբերականում ուղիղ խօսւում է հին կարգի եւ հին սահմանների վերականգնման մասին. «...էր բովանդակն 55 նամակ շրջագայական թղթի իւրաքանչիւր հայրապետի կնքով, եւ այն երկար բանիւք եւ հրահրական նզովիւք գրեալ... Վասն որոյ եւ մեք երկուցեալ յայնպիսի առաքելական հարցն հրամանէ եւ պատկառեալ ի ծերացեալ բազմաժամանակեայ աթոռոյն Սիւնեաց՝ անդրէն դարձուցաք զբոլոր սահման վիճակի նոցա եւ վերստին հաստատեցաք զեղեալ պատիւ նոցա...»: Այնուհետեւ թուարկւում են «Սիսական տան» գաւառները. «Եւ այս իսկ են գաւառք՝ վիճակեալք հաւտի նոցա. Սիւնիք, Բաղք, Արեւեաց տունն, Որդուատ, Արգուլիք, Վանանդ, Երնջակ, Նախիջաւան, Ջուղայ՝ որքան Երասխայ գետն հատանէ, Ճահուկ, Վայոց ձոր՝ Խաչերոյ խոռովն[27], Գեղա-

26 Ստեփաննոսի Սիւնեաց եպիսկոպոսի *Պատմութիւն տանն Սիսական*. Ի լոյս ընծայեաց **Մ. Էմին**, Մոսկվա, 1861, գլ. ԾԶ, էջ 227-228: Հմմտ. *Պատմութիւն նահանգին Սիսական*. Արարեալ **Ստեփաննոսի Օրբէլեան արքեպիսկոպոսի Սիւնեաց**, Թիֆլիս, 1910, ԾԷ, էջ 310:

27 Խաչերոյ խոռ գաւառահատուածը, մեր կարծիքով պէտք է գրաւէր ներկայիս Խաչիկ գիւղի շրջակայքից դէպի Արփա գետն իջնող տարածքը՝ նրա դիմացի աջափնեայ ձորալանջերով հանդերձ, որը սահմանային դիրք ուներ Այրարատ նահանգի արեւելեան գաւառների եւ ժամանակ առ ժամանակ Վասպուրականին անցնող Նախճաւան գաւառի միջեւ: Այս կտորի մասին «Աշխարհացոյց»-ի ընդարձակ խմբագրութեան մէջ Այրարատի ձկարագրութեան վերջում պահպանուել է հետեւեալ շարադրանքը. «Իսկ յելից կուսէ Դուռնայ են գաւառք Ուրծաձոր եւ Արածոյ կողմն՝ ընդ մէջ կալով Վայոց ձորոյ եւ Շարուր դաշտի, ընդ որ հոսի գետն Արփաւանկն *[ձեռագրում գրչի ակնյայտ վրիպակով՝* Արտաւանկն*]* առ Մարանայ *[դեռեւս Ս. Երեմեանի կողմից վերականգնուած՝* Մար[ա]ն[ա]նայ*]* քաղաքով, անցանելով ի հարաւ՝ խառնի յԵրասխ» (*Աշխարհացոյց* Մովսէսի Խորենացւոյ, էջ 34; ՄՀ, հտ. Բ, էջ 2154. հմմտ. **Ս. Տ. Երեմեան**, *Հայաստանը ըստ «Աշխարհացոյց»-ի*, էջ 111-112, ինչպէս եւ մենագրութեանը կից քարտէզում): Բերուած բնագրում առկայ Մարանայ քաղաքն, ըստ ամենայնի, «Աշխարհացոյց»-ում յիշատակուած է եւս մէկ անգամ: Դա Վասպուրականի ձկարագրութեան վերջում է, որն ընդարձակ խմբագրութեան մէջ չի պահպանուել (այստեղ աւարտն է. «...զՆախճաւան, յորում հոմանուն քաղաք»), իսկ համառօտում ընդօրինակուել է խաթարուած ձեւով. «...Գողթն գինեւէտ, Նախճաւան, յորում քաղաքն, եւ **Մարմարանքն** *[տարբ.* Մարմանդքն, Մարմարսն, Մարմարոն, Մարմանոր, Մարանդ, Մարանդն, Մագանդ*]*» (*Армянская география VII века*, էջ 19; *Անանիա Շիրակացու մատենագրութիւնը*, էջ 350; ՄՀ, հտ. Բ, 2172, 2188; **Բ. Յ. Յարութիւնեան**, *Մեծ Հայքի վարչա-քաղաքական բաժանման համակարգն ըստ «Աշխարհացոյց»-ի*, էջ 357): Թւում է, թէ կարելի է հաւանական համարել, որ ճիշտը ոչ թէ վերջին տեղանուան մէջ Վասպուրական աշխարհի նոր գաւառանուն (Մարանդ) տեսնելն է (որպիսի ենթադրութեամբ ուսումնասիրողները մեր նահանգի սահմանը շտապողաբար հասցրել են մինչեւ հարեւան Ատրպատականի Մարանդ քաղաքը. օրինակ՝ Ս. Տ. Երեմեան, *Հայաստանը ըստ «Աշխարհացոյց»-ի*, էջ 44, 65), այլ վերջում ՀՆ տառերն ունեցող այդ խաթարուած բնագիրը «եւ Մարա[ն]ան քա[ղաք]ն» ձեւով վերականգնելը: Իրաւացիօրէն համարւում է, որ նոյն Մարաւանին է վերաբերում Մովսէս Խորենացու՝ բանաւոր վէպից քաղուածի տպաւորութիւն թողնող յայտնի տեղեկութիւնը. «Այլ եւ Արտաւազդայ ո՛չ գտեալ, ասեն, ...տեղեկիկ ապարանից ի հիմնանալն Արտաշատու՝ նա անց, ասէ, գնաց եւ շինեաց ի մէջ Մարաց զՄարակերտ, որ է ի դաշտին, որ անուանեալ կոչի Շարուրայ» (Մովսիսի Խորենացւոյ *Պատմութիւն Հայոց*, Աշխատութեամբ **Մ. Աբեղեան** եւ **Ս. Յարութիւնեան**, Տփղիս, 1913, գիրք Ա, գլ. Լ, [այսուհետեւ՝ *ՊՀ*, Ա.լ], էջ 84; ՄՀ, հտ. Բ, էջ 1829, նախ. 10): Գուցէ իրաւացի կը լինի նաեւ ենթադրել, թէ նրան կարող էր վերաբերուել Ստրաբոնի վկայութիւնը Արտա-

© National Library of Armenia

քունի՝ Կուզաբակովն[28]*, Երիչատ, Ջաղացաձորն եւ Փորակն իսկ բոլորովին*[29]*, յորում*

շատ-Արտաքսատայից արեւելք ընկած Արքսատա քաղաքի մասին՝ "Αρξατα, որն անգամ վերականգնելի է թւում [Μ]αρ[ά]ξατα-Մարաշատ՝ ենթադրելով Արտաշիսեան եւ Արշակունեաց Հայաստանում թերեւս նշանակալի համբաւ ունեցած այս քաղաքի անուան տուեալ երրորդ ձեւի գոյութիւնը եւս:

28 Երկու ձեռագրախմբում՝ Գոզայ բակովն եւ Կոզայ բակովն (հմմտ. Ստեփաննոսի Սիւնեաց եպիսկոպոսի *Պատմութիւն տանն Սիսական*, գլ. ԾԶ, էջ 227; *Պատմութիւն նահանգին Սիսական*, ԾԷ, էջ 310): Բ. Ուլուբաբեանն իրաւացիօրէն նշում է, որ տուեալ տեղանունը հնարաւոր չէ գտնել այլ աղբիւրներում (Բ. Ա. Ուլուբաբեան, *Խաչենի իշխանութիւնը X-XVI դարերում*, էջ 47): Ոմանք ենթադրել են, թէ այն կարելի է համադրել միջնադարում լաւ յայտնի Կոթ գիւղաքաղաքի հետ (տե՛ս Թ. Խ. Յակոբեան, Ստ. Տ. Մելիք-Բախշեան, Յ. Խ. Բարսեղեան, *Հայաստանի եւ յարակից շրջանների տեղանունների բառարան* [այսուհետեւ՝ *ՀՅՇՏ Բառարան*], հտ. 3, Եր., 1991, էջ 186, 242), սակայն դա հաւանական չէ, քանի որ վերջինս Գեղաքունի գաւառում սահմանային դիրք չի գրաւել: Կարելի է ենթադրել, որ «Կոզայ բակ» անուանաձեւը Ստեփաննոս Օրբէլեանին կարող էր հասած լինել արդէն որեւէ գրչի կողմից խաթարուած վիճակում, իսկ փաստաթղթի սկզբնօրինակում այն կարող էր ունենալ «Կղզաբակ» ձեւը եւ նշանակել պարզապէս Սեւանայ կղզու վանքին յարող տարածքը՝ լճի ծայր հիւսիս-արեւմտեան ափերում:

29 Սեւանայ լճից հիւսիս գտնուած վերջին երեք տեղանունները չնկատելով՝ Բ. Ուլուբաբեանը նշում է, թէ Սոթք գաւառի հատուածը յիշատակուած չէ բնագրում, ուստի պատմիչն այն իբրեւ թէ վերագրել է Արցախ-Խաչենին (Բ. Ա. Ուլուբաբեան, *Խաչենի իշխանութիւնը X-XVI դարերում*, էջ 46-47): Սակայն «Ջամբռում» Սեւանայ լճի հիւսիսային ափի գիւղերը վերագրուած են Մաքենիսի վանքին եւ «Սոթ»-ից ու երեք այլ գիւղերից յետոյ թուարկուած են արեւելքից-արեւմուտք հետեւեալ հերթականութեամբ. «...զՋաղացաձոր, զՀամաթիար, զԴարանակս /=*Օրբէլեանի գիւղացանկի՝ Սոթք գաւառի՝* Դարանակ *եւ հետագայի՝* Դարայ/, զԱղջաղալայ, զԻրիշատ, զՈկունիս, զՁիլ, զԱրտաւուն /=*հետագայի՝* Արտանիշ/, զԳետիկ, զԿարմունջ, զՂարաքեափանակ /=*հետագայի՝* Թոխլուջա, *ներկայումս՝* Դրախտիկ/» (Սիմէոն Երեւանցի, *Ջամբռ. Գիրք որ կոչի Յիշատակարան...*, Վաղարշա-

բազում հակառակութիւնք լեալ էին, եւ մեծամեծ նզովիւք ամրացուցեալ էին կաթողիկոսքն Հայոց»[30]*:*

Ստեփաննոս Օրբէլեանն իր շարադրանքի վերջում տալիս է Սիւնեաց 12 գաւառների գիւղացանկերը, ընդ որում դրա վերտառութեան մէջ նշուած է. «Սիւնեաց երկոտասան գաւառաց հարկք եկեղեցւոյ ըստ հին սահմանին *այս են»*[31]*: Այդ ցանկի Սոթք գաւառի 75 (76) հարկատու բնակավայրերի ցուցակի վերջին հատուածում պատմիչը նշում է ոչ միայն Ծարը, այլեւ ուրիշ գիւղանուններ (օրինակ, Ծարից յետոյ՝ 7-8 անուն)*[32]*, որոնք համադրելի են թւում Տրտուի վերնահովտում եղած բնակավայրերի հետ: Այսպէս, օրինակ՝ Գետաբակք (>Գետամիջոյ վանք)*[33]*; Երերի*

պատ-Ս.Էջմիածին, 1873, էջ 283. հմմտ. *ՀՅՇՏ Բառարան*, հտ. 2, Եր., 1988, էջ 465):

30 Ստեփաննոսի Սիւնեաց եպիսկոպոսի *Պատմութիւն տանն Սիսական*, գլ. ԾԶ, էջ 227; *Պատմութիւն նահանգին Սիսական*, ԾԷ, էջ 310:

31 Ստեփաննոսի Սիւնեաց եպիսկոպոսի *Պատմութիւն տանն Սիսական*, գլ. ՀԳ, էջ 371; *Պատմութիւն նահանգին Սիսական*, ՀԴ, էջ 509:

32 Տե՛ս Ստեփաննոսի Սիւնեաց եպիսկոպոսի *Պատմութիւն տանն Սիսական*, գլ. ՀԳ, էջ 374; *Պատմութիւն նահանգին Սիսական*, ՀԴ, էջ 514-515:

33 Հ. Հիւբշմանն առաջինն է իրաւացիօրէն նկատել Ստեփաննոս Օրբէլեանի այս գիւղացանկերի Սոթք գաւառում -բակ / -բակք վերջաւորութեամբ անունների առատութիւնը (նշ. աշխ., էջ 275-276), իրօք՝ 75-ից 14-ը: Սակայն պէտք է նաեւ դիտարկել, որ փոխարէնն այս գաւառի ցանկում բացակայում են -վանք վերջաւորութեամբ գիւղանուններ, այն դէպքում երբ միւսներում դրանց թիւը 2-ից 9 է, ընդ որում այնտեղ էլ բացակայում են բակ-ով աւարտուողներ: Թւում է, թէ այս դիտարկումը կարելի է բաւարար համարել պնդելու, որ տուեալ ենթատեքստում «բակ» (ըստ Հ. Հիւբշմանի՝ «շրջապատուած տեղ, գաւիթ, փարախ, ծիր, պարուակ») նշանակել է հէնց ուղղակի «վանք»: Այդ դէպքում, բացի վերը տրուած Գետաբակք - Գետամիջոյ վանք համադրութիւնից, հնարաւոր է նկատել նաեւ այս ցուցակի Նորաբակք անուան համապատասխանութիւնը Մովսէս Դասխուրանցու Գ.իբ գլխում յիշատակուած Նորավանքի հետ, որը կա-

(հմմտ. Ջերմաջուր)[34]*; Հոնջենք (>Հաճաւ. հմմտ. Աղահեջքում Հունչաւք - Հոչանց [<Հոչանք] զուգորդութիւնը); Վարժակի աղբիւր (հմմտ. Իստիբուլաղ՝ Հաճաւից 6 կմ հիւսիս-արեւելք)*[35]*; Եղջերուենիք*

ռուցել էր «տիկինն Սպրամ...ի գաւառին Սոդէից»: Ենթադրելի է, որ այդպէս կարող էր լինել նաեւ ուրիշ աղբիւրների որոշ ենթատեքստերում:

34 Ըստ Յովհ. Կարապետեանի՝ Ջերմաջուրը (հետագայում յորջորջուած՝ Իստիսու) համադրելի է Ռուսա Ա-ի Ծովինարի սեպագիր արձանագրութեան Երելթուա երկրանուան հետ, որը կազմուած էր վաղնջական շրջանի հայերէն եռ (<երս) արմատով եռել (<եռեալ) եւ թուա - «ջուր» բառերից (Յ. Կարապետեան, *Հայկական լեռնաշխարհը սեպագիր աղբիւրներում*, հտ. I, գիրք 1. *Սեպագիր տեղանուններ (Այրարատում եւ յարակից նահանգներում)*, Եր., 1998, էջ 148-151: Ջերմաջուր գիւղը մէկ յիշատակութեամբ է յայտնի՝ Ծարի Ս. Սարգիս եկեղեցու արեւմտեան պատի նուիրատուական արձանագրութեան մէջ («Ես՝ Կչիկ, տվի իմ Ջերմաջրին ջաղացն...»). տե՛ս *Դիւան հայ վիմագրութեան*, պրակ V, *Արցախ*, էջ 219: Իստիսուի հետ համադրութեան առումով հմմտ. նաեւ Ս. Սարգսեան, *Արցախ*, էջ 81:

35 Համադրութիւնը՝ ըստ Յովհ. Կարապետեանի (*Քարվաճառի (Քելբաջարի) շրջանի յուշարձանների քարտէզ* [հեղ. խումբ՝ Յ. Սիմոնեան, Յ. Սանամեան, Յ. Կարապետեան], Եր., 1995): Իստիբուլաղի յուշարձանների եւ վիմագրերի մասին տե՛ս Ս. Կարապետեան, *Հայ մշակոյթի յուշարձանները*, էջ 47-49, որտեղ գիւղանունը թարգմանուած է՝ Ջերմաղբիւր: Նկատենք, որ այս համադրութեան վերաբերեալ Սլ. Սարգսեանի արտայայտած կասկածանքը («որը դարձեալ Սոդք գաւառի բնակավայրերից է» փաստարկումով. տե՛ս նշ. աշխ., էջ 85), չի կարելի արդարացուած համարել (ընդ սմին միւս դէպքերում կան ընդունելի դիտողութիւններ շտապողական համադրումների մասին): Այս «Վարժակի /*տարբ.* Վարժանկէ/ աղբիւր» տեղանուան հետ համեմատելի է Արածանիի վերնահովտում գտնուող յայտնի տաք հանքային աղբիւրների հինաւուրց անունը՝ «Վարշակի ջերմուկներ» (Ղազարայ Փարպեցւոյ *Պատմութիւն Հայոց եւ Թուղթ առ Վահան Մամիկոնեան*, Աշխատութեամբ Գ. Տէր-Մկրտչեան եւ Ս. Մալխասեան, Տփղիս, 1904, դրուագ Գ, գլ. ՀԳ, էջ 132, հմմտ. ՄՀ, հտ. Բ, էջ 2327, նախ. 3 («ի ջերմկին, որ կոչի Վարշակի»); Հ. Ղ. Ալիշան,

(հմմտ. Մարալդամի՝ խորհրդային շրջանի Բաբաշլար [II]՝ Լեւագետի հովտում)[36]*; Աւձի գետ եւ Աւձէն*[37] *(հմմտ. Օտղլաղ կամ Օտաղլու՝ Քարվաճառ աւանից արեւմուտք եւ հարաւ-արեւմուտք):*

Մի այլ գլխում Ստեփաննոս Օրբէլեանը Սիւնիքի 30 նշանաւոր վանքերի թւում 15-րդ տեղում յիշատակում է «Դադէի վանք»-ը, որին նախորդում են Ծղուկ, Բաղք, Ձորք, Արեւիք, Հաբանդ, իսկ յաջորդում են՝ Աղահեջք, Վայոց ձոր եւ Գեղամայ գաւառների վանքերը[38]*: Սիւնեաց*

Այրարատ. Բնաշխարհ Հայաստանեայց, Վենետիկ-Ս.Ղազար, 1890, էջ 513; *ՀՅՇՏ Բառարան*, հտ. 4, Եր., 1998, էջ 790-791):

36 Համադրութեան առումով հմմտ. նաեւ Մ. եպս. Բարխուտարեանց, *Արցախ*, էջ 404 (Եղջերուագոմ); Ս. Սարգսեան, *Արցախ*, էջ 87:

37 Պատմիչի՝ մեզ հասած գրչագրերում առկայ է Աւժէն գիւղանունը որպէս յաջորդ՝ Աղահեջք գաւառի ցուցակի առաջին անուն: Սակայն ենթադրում ենք, որ այն այդ տեղում յայտնուել է որեւէ արտագրողի նոյն կարգի սխալի հետեւանքով, ինչպիսի սխալի պատճառով, ըստ մեր դիտարկման՝ Աղահեջք գաւառի վերջին Աղբաթխէրտ - Աղախիրտ (*տարբ.* Աղախերդ) գիւղանունը յայտնուել էր յաջորդող Հաբանդ գաւառի ցուցակի սկզբում (տե՛ս Ա. Յակոբեան, *Հակարիի վերնահովտի նորայայտ վիմագրերը*, էջ 276-277): Կրկնենք՝ «Այսօր էլ առկայ ձեռագրերի մեծ մասում գիւղացանկերը տրուած են երկու սիւնակով, եւ եթէ ենթադրենք, որ «Համբանդ գաւառ» բառերը գրուած են եղել մայր ձեռագրի սիւնակներից մէկի վրայ (ո՛չ թէ սիւնակների մէջտեղում), ապա դրա դիմացի սիւնակի բառը, իրականում լինելով նախորդ գաւառի վերջին գիւղը, կարող էր ընկալուել որպէս Հաբանդի առաջինը» (նշենք, որ այս դիտարկման մէջ մեր ներկայ դէպքի համար անհրաժեշտ է փոխել միայն Հաբանդ բառը Աղահեջքով): Իսկ վերադառնալով մեր կողմից վերականգնուած Աւձէն գիւղանուանը՝ ենթադրում ենք, որ յայտնուելով Աղահեջքի սկզբում, այն Աւժէնի է վերածուել մէկ այլ արտագրողի վրիպման հետեւանքով, յաջորդ՝ Անէժ գիւղանուան վերջին բաղաձայնի ազդեցութեամբ:

38 Ստեփաննոսի Սիւնեաց եպիսկոպոսի *Պատմութիւն տանն Սիսական*, գլ. ԿԱ, էջ 249; *Պատմութիւն նահանգին Սիսական*, ԿԲ, էջ 339: Եթէ մեր դիտարկումները ճիշտ են, ապա Դադէի եւ Ծի-

© National Library of Armenia

պատմիչի տուեալների հետ համահունչ է Բջնիի Ս. Աստուածածին եկեղեցու հարաւային պատի 1031 թ. ընդարձակ արձանագրութեան տեղեկութիւնը: Դրա համաձայն՝ Հայոց կաթողիկոսութեան կենտրոնական արքեպիսկոպոսութեան սահմանները նկարագրւում են այսպէս. «Եւ արդ ... զսահմանահատ վիճակս սորա, որ է՝ յարեւելից ի Ծար գետոյ մինչեւ ի գետն Ախուրեան»[39]: Ըստ այսմ՝ այստեղ Ծար գետ կոչուած Տրտուի վերին հոսանքը եւ նրա աւազանը արեւելքից Թուլթխուի հովտից բաժանող լեռնաշղթայի հարաւային մասն է հէնց բաժանել աշխարհացոյցեան Սիւնիքի Սոթք գաւառը աշխարհացոյցեան Արցախի յարակից հատուածից, գոնէ ինչպէս որ դա պատկերացնում էին հետագայում Ստեփաննոս Օրբէլեանին հասած աղբիւրագիտական նիւթերի հեղինակները: Իհարկէ, կարեւոր է նաեւ ընդգծել, որ աշխարհացոյցեան Սոթք-Սաւդք գաւառը չպէտք է շփոթել նրա ձեւաւորումից առաջ գոյութիւն ունեցած՝ ըստ ամենայնի է՛լ աւելի մեծ տարածքով Ծաւդէացւոց իշխանութեան հետ[40]:

Զարգացած եւ ուշ միջնադարում եւս Սոթքի արեւմտեան եւ արեւելեան մասերը, որոնք Սիմէոն Երեւանցու «Ջամբռ»-ում բնորոշուած են «յայսկոյս լերինն» եւ «յայնկոյս լերինն» արտայայտութիւններով, յաճախ ընկալւում էին իբրեւ մէկ ամբողջութիւն: Այդպէս ունենք դեռեւս Վարդան Արեւելցու «Աշխարհացոյց»-ում. «Սոթից գաւառն Ծարայ երկիրն է»[41]: Նոյն կերպ, 1647 թ. մի յիշատակարանում ԺԵ դարի հին Աւետարանի նորոգման վայրը գրիչ Մովսէս երէցն անուանել է «ի յերկիրըն Ծարայ, ի մայրաքաղաքըն Սոթէի»[42]: Նշելի է լոկ, որ ուշ շրջանում Դաղիվանք--Խութավանքի տիրոյթը հանդիսացող Ծար գաւառն արեւելքում ընդգրկում էր նաեւ Թուլթխուի հովիտը եւ Զափար գիւղի ու Խաղարավանք-Խնթրավանքի շրջակայքերը Տրտուի միջնահովտում: Սիմէոն Երեւանցին «Խութավանից» տիրոյթների արեւելեան մասը թուարկում է հետեւեալ ձեւով. «Իսկ յայնկոյս լերինն՝ Մեծ Ծար, Կաժ, Անուխս, Խօլօզանց, Դաշտակ, Հաճաւ[43], Ապահէն, Ճումէն, Քարատակ, Զուար, Մոս, Սեւաջուր, Ծովատեղ, Խրանց, Հալուճ, Մոթանց, երկու Դաւաչխուր՝ մեծ եւ փոքր[44], Լեւ, Եանչաղ, Բարսեղի շէն, Մէյտանն, Երիցի շէն[45], Խութավանք, Զափար, Կեարաք,

39 Այս եւ շրջակայ վիմագրերը գիտական հրատարակութեան է պատրաստել («Դիւան հայ վիմագրութեան» շարքի առաջիկայ հատորի համար) Գագիկ Սարգսեանը:

40 Վերջինիս մասին մանրամասն տե՛ս Ս. Տ. Երեմեան, *Ծաւդէացւոց իշխանութիւնը*,- «ՀՍՍՀ ԳԱ Տեղեկագիր», 1960, թիւ 7-8, էջ 41-52; Բ. Ուլուբաբեան, *Պատմա-աշխարհագրական ճշգրտումներ*,- «Բանբեր Երեւանի համալսարանի», 1971, թիւ 1, էջ 182-186; Ց. Կարագեոզեան, *Հայկական լեռնաշխարհը սեպագիր աղբիւրներում*, էջ 189:

41 *Աշխարհացոյց* Վարդանայ վարդապետի. Քննական հրատ. Հ. Պերպերեանի, համեմատութեամբ 24 ձեռագրի եւ տպագրի, Բարիզ, 1960, էջ 12 (բնագրում տպագրական վրիպակ է սպրդել՝ *Ծառայ* փխ *Ծարայ*. օրինակ հմմտ. ՄՄ, ձեռ. 7085 (ԺԳ դար), թ. 151բ): Ուշագրաւ է նաեւ նոյն ԺԳ դարի կէսերին Կիրակոս Գանձակեցու կողմից նկարագրման ձեւը. «Գիւղ մի ի սահմանս Գեղարքունւոյ ծովուն ի կողմ Խաչենոյ, հուպ ի բերդն Հանդաբերդ, ուր Ջերմուկն է, Ծար անուն. ի նմա էր այս այր...» (Կիրակոս Գանձակեցի, *Պատմութիւն Հայոց*, Աշխատասիրութեամբ Կ. Ա. Մելիք-Օհանջանեանի, Եր., 1961, գլ. ԽԸ, էջ 322):

42 *ԺԷ դարի հայերէն ձեռագրերի յիշատակարաններ*, հտ. Գ (1641-1660 թթ.), Կազմեց Վ. Ցակոբեան, Եր., 1984, էջ 261:

43 Վերջին անունը բնագրում ակնյայտ վրիպակով է՝ Հաճար: Մինչեւ այստեղ թուարկուած են Տրտուի վերնահովտի գիւղերը:

44 Վերջին 12 գիւղանունները Թուլթխու վտակի հովտում են:

45 Վերջին հինգ գիւղանունները Լեւագետի հովտում են, իսկ յաջորդ հինգը՝ Տրտուի միջնահովտում, ներկայիս Մարտակերտի շրջանի արեւմուտքում:

Նորշէն, Խնթրավանք»[46]: Այս գիւղանուններից մի քանիսը յիշատակուած են հայկական ձեռագրերի յիշատակարաններում, վիմագրերում եւ կալուածագիր-սիկելներում. Ծար, Դաշտակ[47], Հաճաւ[48], Ապահէն[49], Մոս[50], Եանչաղ[51], Զափար[52], Խութավանք: Անունների մեծ մասը յստակ համադրւում է ԺԹ դարի քրդաբնակների յորջորջումների հետ, արտացոլուած քարտէզներում եւ այլ նիւթերում. Ծար - Զառ, Կաժ - Կեշդեկ, Խօլօզանց - Խոլազէյ, Հաճաւ - Խալաչլու (հետագայում՝ Օկտեաբրքենդ), Ապահէն - Բենա (հետագայում՝ Քիլսեալու [I], 1767 մ բարձրութեամբ Ղալա յորջորջուած լեռան հարաւային լանջին), Ճումէն - Ջոմարդ, Զուար - Զուլֆուգարլու, Մոս - Մոզքենդ, Սեւաջուր - Ղարասու վտակ, Հալուճ - Օրուջլու, Դաւաչխուր - Դեւաչխուր (հետագայում՝ Խալլանլու), Լեւ - Լեւքենդ, Եանչաղ - Նոյնը, Բարսեղի շէն - Բաղրսաղ, Մէյտան - Մայդանչայ վտակ, Երիցի շէն - Քեշիշքենդ[53]: Իսկ այն, որ Սիմէոն Երեւանցու ցուցակում բացակայում են յիշատակարաններից ու վիմագրերից լաւ յայտնի Քարվաճառ[54], Ցրագետ[55], Կոդուր (հետագայում՝ Կոթուրլու)[56], Տպէլ (հետագայում՝ Բաշտիբել, խորհրդային շրջանում՝ Բաշլիբել)[57] եւ այլ գիւղանուն-

46 Սիմէոն Երեւանցի, *Ջամբռ*, էջ 283:

47 ՄՄ ձեռ. թիւ 3601, թ. 228ա: Հմմտ. Պ. Զոբաանեան, *Քարվաճառի էթնիկ դիմագծի հարցի շուրջ*, էջ 219:

48 *Դիւան հայ վիմագրութեան*, պրակ V, *Արցախ*, էջ 226 («...տուի զԱնիքուց հողն ի Հաճաւա[յ] եկեղեցին...»); Ս. Կարապետեան, *Հայ մշակոյթի յուշարձանները Խորհրդային Ադրբեջանին բռնակցուած շրջաններում*, էջ 49 («Ցիշատակ է նովս Ամիրճանին, Ամիրխանին, Ախիճանին, Հ[ա]ճ[ա]ւ գ[ե]ղ[ոյ]ս...»):

49 *Դիւան հայ վիմագրութեան*, պրակ V, *Արցախ*, էջ 198-199 («...գեւղս եւ ագարակս իւրեանց սահմանաւքն՝ զԱպահէն եւ զԵզնարաձանց, եւ զԲճանց եւ զկանաչաւորն, որ ի Վայո ձոր...»), 216; *ԺԷ դարի հայերէն ձեռագրերի յիշատակարաններ*, հտ. Գ, էջ 489 («...եկեալ հասա ի յերկիրըն Ծարայ, ի գեւղն, որ կոչի Ապահէն...»); Ս. Քամալեան, *«Աղուանից աշխարհի» Թադէ կամ Խոթա վանքի կալուածների վերաբերեալ մի դաբալա-կալուածագիր*,– «Кавказ и Византия», вып. 2, Ер., 1980, էջ 153 («Եւ՝ Սէտիս /Ինարբ. Սէյտիս/, որդի Գրիգորին, թոռն պարոն Հասանայ, ետու մեր վանորէիցն զԱպահէն, զխութ, զխոզեանկա...»), էջ 154 («...տվի վախմ բաժնէն իմմէ զԱպահէն իւր մուլքովն...»):

50 *ԺԷ դարի հայերէն ձեռագրերի յիշատակարաններ*, հտ. Գ, էջ 601 («...եկեալ բնակեցաւ ի յերկիրս Ծարա[յ], ի գեւղն Մոս»):

51 Մ. եպս. Բարխուտարեանց, *Արցախ*, էջ 221 («...յիշատակ է բարեմիտ Ցուրին... ի երկրէն Ծարայ, ի գեղջէն Եանշաղէն...»):

52 *ԺԷ դարի հայերէն ձեռագրերի յիշատակարաններ*, հտ. Գ, էջ 654 («...որ եմ յերկրէն Ծարայ, ի գեղջէն Զափարու...»); *Դիւան հայ վիմագրութեան*, պրակ V, *Արցախ*, էջ 216; Ս. Քամալեան, *«Աղուանից աշխարհի» Թադէ կամ Խոթա վանքի կալուածների վերաբերեալ մի դաբալա-կալուածագիր*, էջ 153 («...ի Հարցլու դայէն, ի Զափարու հանդէն, Ծագունանց Ագարակագետով...»):

53 Հմմտ., օրինակ, Е. Кондратенко, *Карта Елисаветпольской губернии с показанием сельских обществ...*, Тифлис, 1898; Լէօ, *Պատմութիւն Ղարապաղի Հայոց թեմական հոգեւոր դպրոցի. 1838-1913*, Թիֆլիս, 1917, էջ 152-156, 677-678); *Карта генерального штаба К-38-141. Кельбаджар. масштаб 100000*, Москва, 1978:

54 *ԺԵ դարի հայերէն ձեռագրերի յիշատակարաններ*, Կազմեց Լ. Ս. Խաչիկեան, հտ. Ա, Եր., 1955, էջ 24 («...ի հռչակաւոր երկիրս Ծար, ի գեւղս Քարավաճառ»); ՄՄ, Կաթող. դիւան, թղթ. 240, վաւ. 160, թ. 4ա «...այս քանի գիւղօրայքս մեզ բաժին տվին ... Ատրէնիս, Ըռուցփոր, Քավթառանց, Հաճաւ, Բորու, Քարվաճառ, Գումէրն, Զուար»); ՀՊՊԿԱ, ֆոնդ 57, ց. 1, գ. 4, թ. 4 (նոյնը):

55 ՄՄ ձեռ. թիւ 4074, թ. 299ա: Հմմտ. Պ. Զոբաանեան, *Քարվաճառի էթնիկ դիմագծի հարցի շուրջ*, էջ 219:

56 *Դիւան հայ վիմագրութեան*, պրակ V, *Արցախ*, էջ 204; Ս. Կարապետեան, *Հայ մշակոյթի յուշարձանները Խորհրդային Ադրբեջանին բռնակցուած շրջաններում*, էջ 112 («Եւ՝ Ցովանէս երէց Կոդրեցի, իմ հալալ արդեամբք միաբանեցա[յ]...»): Համադրութեան առումով հմմտ. նաեւ Ս. Սարգսեան, *Արցախ*, էջ 80:

57 Այս գիւղի մասին մանրամասն տե՛ս Ա. Ց. Ցակոբեան, Ց. Ե. Սիմոնեան, *Դաղիվանքի նորա-*

© National Library of Armenia

ներ, հաւանաբար բացատրւում է նրանով, որ ԺԸ դ. երկրորդ կէսում նրանք արդէն հայաբնակ չէին:

Արցախի կենտրոնական գաւառների արեւմտեան հատուածի պատկերն ամփոփելու համար կրկնենք, որ յարակից գաւառների սահմանների նշուած ճշգրտումներից յետոյ հնարաւոր է դառնում աշխարհացոյցեան Հարջլանք գաւառը տեղորոշել հէնց Տրտուի Թուլթխու վտակի աւազանում, հարեւան ինչ-ինչ տարածքների հետ միասին[58]: Մանրամասնենք, որ Թուլթխուի հովտում Հարջլանք գաւառանունը որոշակի նմանութիւն է դրսեւորում ԺԹ դարից Օրուջլու յորջորջմամբ գիւղի անունը՝ Կարասու վտակի գետաբերանում (սրա վերնահովտում «Ջամբռ»-ում նշուած է Սեւաջուր բնակավայրը)[59]: Օրուջլուի հետ իրաւացիօրէն համադրւում է «Ջամբռ»-ի Հալուճ գիւղանունը (ըստ Սլ. Սարգսեանի[60]): Իսկ հաշուի առնելով Հայաստանի (նաեւ՝ յարակից երկրների) տեղանուններում հնդիրանական Ր-Լ եւ Լ-Ր հնչիւնական անցումների յաճախակիութիւնը[61]՝ Հալուճ անունը կարող է դիտուել իբրեւ Հարջլանք գաւառանուան հետ ուղիղ կապ ունեցող:

Վերջինիս հետ աւելի ուղղակի կապը նկատելի է Հարջանտուս տեղանուան դէպքում, որը յիշուած է Գանձասարի կաթողիկէի 1240 թ. շինարարական վիմագրում (ներքուստ, հիւսիսային պատին, 27 տող), Ջալալ-Դօլա Հասան իշխանի նուիրատուութիւնների թուարկման հատուածում. «...գեղորայս Մաչեղ, Հարջանտուս, Բոլորքոչն, :Ա: լուծ ի Խաչինաձոր, Նորաշինկան գետն, Այգեստանս, Եղգընգնի, զոր իմ հայրն է տուել...»[62]: Այստեղ թուարկուած անունները յայտնի չեն հաստատապէս Մեծ Իրանքում գտնուած Գանձասարի վանքին մօտիկ եւ վիմագրական ու այլ յաճախակի յիշատակումներ ունեցող տեղանունների թւում[63], իսկ նրանցից մէկը՝ Նորաշինկան գետը համադրելի է Խաչենագետի վերնահովտի՝ ԺԹ դարից Թաղաքենդ յորջորջուող գիւղի անուան հետ: Դրանից հնարաւոր է ենթադրել, որ Հասան Ջալալի նուիրաբերած կալուածքները (այդ թւում եւ Հարջանտուսը) գտնուել են Խաչենագետի վերին վտակների շրջանում: Այդ դէպքում նկատելի է, որ Հարջլանք գաւառանուան հետ որոշակիօրէն համադրելի կարող է դիտուել նաեւ Գանձասարից քիչ արեւմուտք յառնող

յայտ արձանագրութիւնը եւ Տպէլի տեղադրութեան հարցը,— «Պատմա-բանասիրական հանդէս», 1998, թիւ 1-2, էջ 227-232:

58 Տե՛ս **Ա. Յակոբեան,** *Կենտրոնական Արցախի Հարջլանք եւ Պիանք գաւառների տեղադրութիւնն ըստ «Աշխարհացոյց»-ի*, էջ 47-50:

59 **Սիմէօն Երեւանցի,** *Ջամբռ*, էջ 283: Տե՛ս վերեւում, ծան. 44: Համադրութեան առումով հմմտ. նաեւ **Ս. Սարգսեան,** *Արցախ*, էջ 78:

60 Ս. Սարգսեան, *Արցախ*, էջ 79:

61 **Т. В. Гамкрелидзе, В. В. Иванов,** *Индоевропейский язык и индоевропейцы. Реконструкция и историко-типологический анализ праязыка и протокультуры*, I, Тбилиси, 1984, էջ 198-199; **Ց. Կարագեոզեան,** *Հայկական լեռնաշխարհը սեպագիր աղբիւրներում*, էջ 236:

62 *Դիւան հայ վիմագրութեան*, պրակ V, *Արցախ*, էջ 38-39; **Բ. Ուլուբաբեան,** *Գանձասար*, Եր., 1981, էջ 88; **Է. Դանիէլեան,** *Գանձասարի պատմութիւն*, Եր., 2005, էջ 110: Բոլոր ընթերցումները ստուգել ենք տեղում:

63 Բացառութիւն է կազմում միայն «Մաչեղ» անունը, որին նման է Դրմբոն գիւղի շրջակայքի Մատուռի ձոր կոչուած հատուածում յիշատակուած Մաչախ տեղավայրը (տե՛ս Ծ. Մկրտչեան, *Լեռնային Ղարաբաղի պատմա-ճարտարապետական յուշարձանները*, Եր., 1980, էջ 49. հմմտ. **Ш. Мкртчян,** *Историко-архитектурные памятники Нагорного Карабаха*, Ер., 1988, էջ 51; *ՀԾՇՏ Բառարան*, հտ. 3, էջ 697, 716): Նշենք, սակայն, որ Դրմբոնի մօտերքում Հասան-Ջալալեանների կալուածքների գոյութիւնն ինքնին անսպասելի է, յամենայն դէպս, մեզ ծանօթ չեն նման այլ փաստեր: Ուստի, իբրեւ զուտ վարկած (քանի որ բոլոր դէպքերում մեր խնդիրը լուծւում է անկախ դրանից), չի կարելի լրիւ անտեսել անգամ երկու նոյնանուն տեղանունների գոյութեան տարբերակը:

լեռնազանգուածի «Խոջայեուրտ» (Ղոջազուրդ) յորջորջումը, որն իր բարձրութեամբ (2389,3 մ) չի զիջում աւելի արեւմուտքում Թուլթխուի եւ Խաչենագետի ջրբաժան Արցախեան լեռնաշղթայի գագաթներին (2100-2300 մ), եւ որը հիւսիսից սեղմելով՝ Խաչենագետի ընդարձակ վերնահովիտը բաժանում է նրա նեղ միջնահովտից: Աւելացնենք, որ այդ լեռանը կարող է վերաբերել միջնադարեան 3 կալուածացանկերում (սիկելներում) յիշուած Հարզաքար (նաեւ՝ Հարազաքար, Հարցլուդայա) լեռնանունը[64]:

*Դժուար չէ նաեւ նկատել, որ Խոջայեուրտով դէպի արեւելք ձգուող, Տրտուի եւ Խաչենագետի ջրբաժան շղթայի «Արծաթահանքի լեռներ» անուան[65] հիման վրայ հնարաւոր է առաջ քաշել այն վարկածը, թէ հաւանաբար պատահական չէ Հարջլանք անուան հիմքի նմանութիւնը բնիկ հայերէն «արծաթ» բառի (նաեւ «սպիտակ» նշանակութեամբ) հնդեւրոպական *Hark'- հիմքին (որից ունենք՝ խեթ. harki-, հին հնդկ. rajatá-, յուն. ἄργυρος, հին պարսկ. ardata-, լատ. argentum եւ այլն[66]): Նշենք, որ ըստ Յովհ. Կարագեոզեանի հաւանական ենթադրութեան՝ Հարճլանքը յիշուած է բիւզանդական Ռուսա Ա արքայի Ծովինարի սեպագրում (սիւնիք-արցախեան 23 «նուաճուած երկրների» թուարկման մէջ)՝ հայերէնի սեռական հոլովով դրուած (առանց աճական Հ-ի եւ բառամիջում Կ>Ծ>ճ հնչիւնափոխութեան ենթակայ Կ-ով) «Երկիլա» անուանաձեւով[67]: Բայց վերջինիս հիմքը «արկտոս»-«արջ» բառով ստուգաբանելու եւ Քիրս [<Խիրս] լեռան հետ կապելու հեղինակի փորձը[68] դժուար է ընդունել. փոխարէնը՝ բոլոր կողմերից դիտարկելի եւ ընդգծուած սուր, ժայռոտ գագաթով այդ լեռան անունը հաւանական է թւում բխեցնել պարզապէս հայերէն «քերծ» («ժայռ») բառի նոր պարսկերէն յորջորջումից[69]:*

Կարելի է յաւելել, որ ԺԳ դարի մի յիշատակարանում (Զիկագոյի համալսարանի մատենադարանի ձեռ. թիւ 949, Աւետարան, 1237 թ.) «Գանձասար մենաստանի» մասին ասւում է՝ «ի գլուխ սահմանաց Խաչենոյ»[70], որը կարող է լինել արձագանքը Մեծ Իրանք եւ Հարջլանք գաւառների միջեւ հինաւուրց սահմանի: Եւ վերջապէս, եթէ ընդունելի է Հարջլանքի տեղորոշումը Թուլթխուի աւազանում ու Խաչենագետի վերնահովտում, ապա կարելի է նաեւ որոշ նմանութիւն նկատել գաւառանուան եւ ուշ միջնադարում յայտնի Մրջմանց (1581 թ. սիկելում՝ Մարչամանց[71] [<Մարջամանց], 1729 թ. ընդօրի-

---

67 **Ց. Կարագեոզեան,** *Հայկական լեռնաշխարհը սեպագիր աղբիւրներում*, էջ 197-198:

68 Նոյն տեղում, էջ 259-260:

69 Հմմտ. **Ա. Յակոբեան,** *Կենտրոնական Արցախի Հարջլանք եւ Պիանք գաւառների տեղադրութիւնն*, էջ 49:

70 Թ. 313ա. «մեք՝ Գրիգոր եւ Վարդան ...քահանայք..., յորս եմք տեղեակեալ ի գլուխ սահմանաց Խաչենոյ, ի սուրբ ուխ[տէն] Գանձասար մենաստան, որ [հանդէպ՞] դղեկիս Խխսաղան Հ[ասա՞]խաղաց...» (տե՛ս **F. Sanjian,** *A Catalogue of medieval armenian Manuscripts in the United States*, Los-Angeles-London, 1976, էջ 234: Հմմտ. *Հայերէն ձեռագրերի յիշատակարաններ. ԺԳ դար*, Կազմեց **Ա. Մաթեւոսեան,** Եր., 1984, էջ 199; **Հ. Յակոբեան,** *Արցախի ձեռագիր մատեանների արուեստի մասին*,— «ԼՂՀ անցեալը, ներկան եւ ապագան», Եր., 2007, էջ 377):

71 **Ս. Քամալեան,** *«Աղուանից աշխարհի» Թադէ կամ Խոթա վանքի կալուածների վերաբերեալ մի դաբալա-կալուածագիր*, էջ 154 («ես՝ Գոն-

© National Library of Armenia

նակուած ձեռագիր Մաշտոցի յիշատակարանում՝ Մրչմանց[72], ԺԹ դարի քարտէզներում եւ փաստաթղթերում՝ Մերջիմեկ, Մարջումակ[73]) տեղանուան միջեւ՝ վերջինիս մէջ, իբրեւ վարկած, տեսնելով Հայաստանի հիւսիսում դիտուող անուանակերտ Մ նախդիրի յաւելում (ինչպէս՝ Ալգեթի [<Ագլեթի] - Մանգղեաց փոր, Եգր - մեգրել, Մազազ - Ազա [երկիր]): Իսկ դրա հիման վրայ հնաբաւոր է ենթադրել, որ աշխարհացոյցեան Հարջլանք գաւառի մէջ կարող էր լինել նաեւ Տրտուի աջափնեայ, նոյնպէս ուշագրաւ Արագ(չայ) անուանումով վտակի հովիտը (Բերդաձորի Ս. Գրիգոր անունով յայտնի վանքի եւ Խաղարավանքի շրջակայքերով հանդերձ)՝ Արծաթահանք-Խոջայեուրտ լեռան հիւսիս-արեւմտակողմում[74]:

* * *

Առկայ աղբիւրագիտական տուեալների համադրումը ցոյց է տալիս, որ վաղ շրջանում Սիւնիքի մաս կազմող Տրտուի վերնահովիտը՝ Մար գաւառի տարածքը, ինչպէս նաեւ Սոթքի մնացեալ, Սեւանայ լճի ափն ընդգրկող արեւմտեան հատուածը, դուրս է եկել այդ աշխարհի աւատատէրերի տնօրինութիւնից եւ միացուել Արցախ աշխարհի Մեծ Իրանք գաւառի (տուեալ դէպքում արդէն՝ Խաչենի) իշխանների տիրոյթներին: Ըստ Մովսէս Դասխուրանցու մօտ պահպանուած ուղիղ տեղեկութեան՝ իր Սպրամ դստերը փրկելու համար Տրտուի միջնահովտում տիրոյթներ ունեցող Միհրական տոհմի վերջին իշխան Վարազ Տրդատի կինը «...ամուսնացուցանէ զՍպրամ Ատրներսեհի՝ Սահլի որդւոյ, որ էր ի տոհմէն Հայկայ տէր Սիւնեաց, որոյ բռնազբաւութեամբ կալեալ էր զգաւառն Գեղամայ»[75]:

Ուշադիր քննութեան արդիւնքում հնարաւոր է մանրամասնել, որ Սոթք-Մարի տարածքը Խաչենի տիրոյթների մէջ է մտցուել հաւանաբար միայն Սահլ Սմբատեանի իշխանութեան վերջին տարիներին, Բաբեկի ձերբակալումով Արաբական խալիփայութեանը մատուցած նրա նշանակալի ծառայութեան դիմաց: Բաբեկին ձերբակալած Սահլ իբն Սումբատին մեծ գանձագին եւ շնորհներ տալու մասին մի քանի տարբերակով պատմում են արաբ հեղինակները՝ Դինաւարին, Բալազուրին, Եաքուբին, ալ-Մուկադդասին, Մասուդին, Տաբարին, Իբն ալ-Ասիրը[76]: Ըստ Մասուդիի եւ Տաբարիի՝ Խաչենի հայ իշխանը խալիփայից նաեւ պատրիկի թագ էր ստացել[77]: Իսկ ըստ Պատմութիւն Աղուանից-ի՝ նա Հայոց, Վրաց եւ Աղուանից աշխարհների իշխանաց իշխան՝ «տերանց տէր» էր նշանակուել (որը թերեւս կարճատեւ է եղել)[78]:

Բնական կը լինէր մտածել, որ հենց այդ ժամանակ Խաչենի տէրն իր տիրոյթներին միացրել է նաեւ յարակից Սիւնիք նահանգի որոշ տարածքներ («բռնազբաւութեամբ կալեալ էր զգաւառն Գեղամայ»): Իսկ դեռեւս Թ դարի 20-ական թթ., ըստ Մովսէս Դասխուրանցու եւ Ստեփաննոս Օրբէլեանի՝ միեւնոյն ողբերգական դիպուածին՝ Վարազ Տրդատ Աղուանից իշխանի ու նրա մանկահասակ Ստեփաննոս որդու սպանութեանը վերաբերող տեղեկութիւնների համադրութեան՝ «Դադոյի վանքի խորաձորը» անհրաժեշտ է դիտել որպէս Սիւնեաց իշխանների տիրոյթ: Պատմիչներից առաջինն իր բուն բնագրում այդ դիպուածը նկարագրում է այսպէս. «Եւ ի նոյն ամի տէր Ներսեհ ի Փղիպեան [bclr գրչագրերում՝ Փիլիպեան] սպան զՎարազ Տրդատ ի Ստեփաննոսեան, եւ զորդի նորին ի գոգ մաւրն [a գրչագրում՝ մաւրն գոգ] զենին եւ զամենայն ստացուածս նորա յափշտակեցին: Այս Վարազ Տրդատ ի Միհրական տոհմէն [a տոհմէ] էր, որք զԱղուանս ժառանգեցին՝ որդի ի հաւրէ առնլով [a առլով]»[79]: Երկի նախավերջին գլխում, որտեղ Մովսէս Դասխուրանցին ամփոփում է Աղուանից իշխանների մասին իր տեղեկութիւնները եւ գնահատականները, ասւում է մի փոքր այլ կերպ. «Զայս Վարազ Տրդատ եւ որդի իւր Ստեփաննոս Ներսեհ [bclr Ներսէ] ի Փիլիպեան՝ ազգակիցն իւր, սպան ի միում ժամու ի խորաձորն, որ կոչի Դադոյի վանք»[80]: Ստեփաննոս Օրբէլեանի «Պատմութիւն տանն Սիսական» երկում նոյն դիպուածի մասին կարդում ենք գրեթէ նոյն բառերով, սակայն մի քանի էական տարբերութիւններով. «Ի սոյն ամի եւ տէր Ներսեհ Սիւնի՝ որդի Փիլիպէի, սպանանէ վասն ոխութեան ինչ զՎարազ Տրդատ՝ որդի Ստեփաննոսի Աղվանից իշխանի, եւ զորդին եւս նորա ի գոգ մաւրն սատակէ եւ զամենայն ինչս նորա յաւարի առնու: Այս Վարազ Տրդատ ի Միհրական տոհմէն էր, որ ունէր զսեպհական տէրութիւնն Աղուանից»[81]: Թէպէտ նկարագրուած հա-

---

ցէս... տպի իմ հայրենեացն Խոթասարն, Ծարքարն, Հարզաքարն, եկեղեցին Մարչամանցու մուլքն...»):

72 Մ. եպս. Բարխուտարեանց, *Արցախ*, էջ 221 («Եւ՝ Մրչմանցի տէր Մելիքսեթի որդի Մարկոսը...»):

73 Մանրամասն՝ Ս. Կարապետեան, *Հայ մշակոյթի յուշարձանները*, էջ 74-75:

74 Հմմտ. Ա. Ցակոբեան, *Կենտրոնական Արցախի Հարջլանք եւ Պիանք գաւառների տեղադրութիւնն*, էջ 49-50:

75 *ՊԱ*, Գ.իբ/իգ/, էջ 340: Գեղամայ գաւառ ասելով հեղինակն, ըստ ամենայնի, նկատի ունի ոչ թէ ամբողջ Գեղաքունի գաւառը, որն «Աշխարհացոյց»-ում ընդգրկում էր Սեւանայ (Գեղամայ) լճի ողջ արեւմտեան ու հարաւ-արեւմտեան աւազանը, այլ նրա միայն հարաւային մասը՝ հետագայ աղբիւրներում յիշատակուած սահմանացուցիչ Ծողուագ (ներկայումս՝ Ջորաղբիւր) գիւղից արեւելք, ներառելով նաեւ յարակից Սոթքի լճափնեայ կէսը: Այս ընդգրկումով գաւառը յայտ-նի է նաեւ ուրիշ աղբիւրներում, օրինակ՝ երբ նրա բնակավայր է համարւում նշանաւոր Մաքենիսը (Վարդանի «Աշխարհացոյց»-ում՝ «Գեղամ Գեղարքունի է, ուր կայ ուխտն Մաքենիս...». էջ 12), որը Օրբէլեանի գիւղացանկում (եւ ըստ այդմ, պէտք է համարել՝ «Աշխարհացոյց»-ում) Սոթքում էր: «Սիւնեաց տէր» լինելու առումով ուշագրաւ է Սահլի թոռ Գրիգոր Ատրներսեհեանի՝ Մեծ Մասրիկ գիւղում 881 թ. կանգնեցրած խաչքարի բանաձեւը. «...ես՝ Գրիգոր Ատրներսեհեան, Սիւնեաց եւ Աղվանից իշխան, կանգնեցի զսուրբ նշանս...» (*Դիւան հայ վիմագրութեան*, պրակ IV, *Գեղարքունիք*, էջ 334): Արդէն ԺԱ դ. ասւում էր. «...ի մերում սեփհականին իսկ յԱղուանեանն աշխարհի աւանն՝ կոչեցեալ Մար» (*Գրիգոր Մագիստրոսի Թղթերը*, Բնագիրն առաջաբանով եւ ծանօթութիւններով ...լոյս ընծայեց Կ. Կոստանեան, Ալեքսանդրապոլ, 1890, էջ 221):

76 Տե՛ս *Արաբական մատենագրեր Հայաստանի մասին*, Հաւաքեց եւ թարգմանեց Բ. Խալաթեանց, Վիեննա, 1919, էջ 95-96, 119; Իբն ալ-Ասիր, Թարգմ. բնագրից, առաջաբան եւ ծանօթագրութիւններ Ա. Տէր-Ղեւոնդեանի (*Օտար աղբիւրները Հայաստանի եւ հայերի մասին, 11. Արաբական աղբիւրներ, Բ*), Եր., 1981, էջ 141-145, 379; 16; *Արաբ մատենագիրներ*, Ներած. եւ բնագրից թարգմանութիւնները Ա. Տէր-Ղեւոնդեանի (*Օտար աղբիւրները..., 16*), Եր., 2005, էջ 218, 281, 387: Հմմտ. Ն. Ադոնց, *Պատմական ուսումնասիրութիւններ*, Պարիս, 1948, էջ 134-136; V. Minorsky, *Sahl ibn Sunbat of Shakki and Arran*,– BSOAS, 1953, XV/3, էջ 155:

77 Տե՛ս *Tarikh* at-Tabari, Edition critique par M. Abu-l-Fath Ibrahim, t. IX, Le Caire, 1969, էջ 54; Н. А. Караулов, *Сведения арабских писателей о Кавказе*.– СМОМПК, вып. XXXVIII, Тифлис, 1908, էջ 92; Ս. Գ. Բարխուդարեան, *Արցախի, Ծաքիի եւ Փառիսոսի իշխանութիւնները*, էջ 62; *Հայ ժողովրդի պատմութիւն*, հտ. II, Եր., 1984, էջ 363:

78 *ՊԱ*, Գ.ի /իա/, էջ 330-331 («ի նոյն ամին *[837 թ.]* նոյն տէր Սահլի Սմբատեան ձերբակալ արարեալ զապստամբն Բաբան... եւ ի ձեռս Ամիր Մոմնոյ: Եւ ընդ վաստակոցն առնու յարքունեացն վարձս բարիս, զի առնու իշխանութիւն ի վերայ Հայոց, Վրաց եւ Աղուանից՝ տիրել իշխանութեամբ ամենեցուն արքայաբար... ի սոյն ամի՝ *[838 թ.]* տերանց տէրն Ցովհաննէս, որ Հայոց, Վրաց եւ Աղուանից եղեւ տէր»): Աղբիւրի մասին՝ ստորեւ:

79 *ՊԱ*, Գ.ժթ/ի/, էջ 326:

80 *ՊԱ*, Գ.իբ/իգ/, էջ 340:

81 Ստեփաննոսի Սիւնեաց եպիսկոպոսի *Պատմութիւն տանն Սիսական*, գլ. ԼԲ, էջ 115; *Պատմութիւն նահանգին Սիսական*, էջ 158-159:

© National Library of Armenia

շուեհարդարն իրականացնողի՝ Սիւնեցի իշխան լինելն արձանագրուած է միայն Օրբէլեանի մօտ, սակայն բովանդակային պարզ քննութեամբ կարելի է նկատել, որ այդ մանրամասնը յօրինուած չէ նրա կողմից, քանի որ դրա համար որեւէ պատճառ հնարաւոր չէ նշմարել: Թերեւս միանշանակ է, որ այդ մանրամասնը պարզապէս առկայ է եղել ենթադրելի սկզբնաղբիւրում, իսկ Մովսէս Դասխուրանցու կողմից բաց է թողնուել անկարեւորութեան եւ աւելորդ մանրամասն ներառելու պատասխանատուութիւնից խուսափելու պատճառով (միեւնոյն պատճառով Սիւնեաց պատմիչի մօտ բացակայում է հակամարտող իշխանների՝ ինչ-որ կերպ ազգակից լինելու մասին մանրամասնը):

Տեղին նշենք, որ վերը բերուած բնագրերի համադրութեան շնորհիւ ի յայտ եկող մեծ նմանութիւնը թոյլ է տալիս ընկալել Ստեփաննոս Օրբէլեանի եւ Մովսէս Դասխուրանցու կողմից նոյն սկզբնաղբիւրը, այն է՝ Մաշտոց Եղիվարդեցի կաթողիկոսի՝ մեզ չհասած «Պատմութիւն» երկն օգտագործած լինելու իրողութիւնը, ինչպէս նաեւ ճշտել վերջինիս բովանդակութեան սահմաններն ըստ «Պատմութիւն Աղուանից»-ի: Ամբողջ ԼԲ գլխում Սիւնեաց պատմիչը ներկայացնում է Սիւնիքի՝ Թ դարի առաջին կէսին վերաբերող վկայութիւններ, որոնք շատ դէպքերում, բառացի համընկնում են Մովսէս Դասխուրանցու երկի Գ գրքում յստակ ժամանակագրութիւն ունեցող հաղորդումների հետ: Ժամանակին մենք նկատել էինք «Պատմութիւն Աղուանից»-ում Սիւնիքին վերաբերող տեղեկութիւնների անսպասելի առատութիւնը եւ փորձել ինչ-որ մեկնաբանութիւններ տալ դրան[82]: Սակայն այժմ կարելի է բաւարար համարել դրանցից միայն մէկը. Մովսէս Դասխուրանցին Մաշտոց Եղիվարդեցու պատմական երկում առատ նիւթ գտնելով իր խնդրոյ առարկայ «Աղուանից» երկրի վերաբերեալ՝ մեծ ծաւալով քաղել է դրանք եւ այդպիսի նիւթերի արանքում պարզապէս ընդօրինակել նաեւ զուտ Սիւնիքին վերաբերող որոշակի նիւթեր: Իսկ Մաշտոցի՝ նշուած ժամանակագրական հաղորդումների աղբիւրը լինելու հանգամանքը նախկինում չի նկատուել պարզապէս այն պատճառով, որ այդ մասին ուղիղ վկայութիւնը Ստեփաննոս Օրբէլեանի շարադրանքի բովում յայտնուել է յաջորդ գլխի վերջնամասում, Թանահատի վանքի մասին տրուած պատմութիւնից յետոյ: Վերջինս առնուած չէ Մովսէս Դասխուրանցու կողմից, սակայն բնագրագիտական ուշադիր ընթերցումից երեւում է, որ ոչինչ չի խանգարում՝ դրա գոնէ մեծ մասը եւս համարելու Մաշտոց Եղիվարդեցու կորսուած երկին յանգող: Իսկ այդ պատմութիւնից յետոյ Սիւնեաց պատմիչը բառացի գրում է՝ «Եւ զայս ծանոյց մեզ Պատմութիւնն երանելւոյն Մաշտոցի, որ ի Սեւան», եւ ապա շարունակում. «Բայց գտաք յիւրոց արձանագրութեանցն, եթէ 400 ամաւք յառաջ քան զՀայ թուականն չինեցաւ եկեղեցին յիշխանացն Սիւնեաց՝ [յ]անուն սրբոյ նախավկային Ստեփաննոսի»[83]: Վերն ընդգծուած երկրորդ նախադասութեան կտորն այստեղ կարեւոր է նրանով, որ ցոյց է տալիս տուեալ գլխի շարադրման համար Ստեփաննոս Օրբէլեանի ձեռքի տակ նաեւ այլ նիւթերի եղած լինելը: Այլ է եղել նաեւ նրա համար «Պատմութիւնն երանելւոյն Մաշտոցի» երկի կարեւորութիւնն իբրեւ սկզբնաղբիւր: Եթէ Մովսէս Դասխուրանցին դրել է

82 **А. А. Акопян**, *Албаний-Алуанк в греко-латинских и древнеармянских источниках*, Ер., 1987, էջ 203, 210:

83 **Ստեփաննոսի Սիւնեաց եպիսկոպոսի** *Պատմութիւն տանն Սիսական*, գլ. ԼԳ, էջ 117; *Պատմութիւն նահանգին Սիսական*, ԼԴ, էջ 160: Այս տեղեկութեան շնորհիւ՝ Մաշտոց Եղիվարդեցու պատմական երկի գոյութիւնը ենթադրել են բոլոր հայ մատենագրագէտները:

այն իր երեք գրքահատուածներից վերջինի՝ մեր ճշտումների համաձայն՝ ամբողջ երկրորդ կէսի հիմքում (բացառեալ վերջին երկու գլուխները եւ դրանց նախորդող երկու պարբերութիւն ԻԱ գլխում), ապա Ստեփաննոս Օրբէլեանը բաւարարուել է միայն մէկուկէս ոչ մեծ գլուխների համար (ԼԲ եւ ԼԳ) տեղեկութիւններ քաղելով: Ճիշտ է, իր սկզբնաղբիւրի մասին, ի բարեբախտութիւն մեր ժամանակի հետազօտողի՝ յանուանէ յիշատակել է հէնց Սիւնեաց պատմիչը:

Վերադառնալով Տրտուի վերնահովտի պատմա-աշխարհագրական իրավիճակի քննութեանն՝ ամփոփենք, որ վերը նշուած ողբերգական դիպուածի եւ Սահլ Սմբատեանի շնորհառութեան պահի փոփոխութիւնից յետոյ է միայն, որ այն սկսում է ինչ-ինչ ենթատեքստերում կոչուել ոչ միայն Ծար եւ Վերին Խաչեն, այլ նաեւ Փոքր Սիւնիք: Ժամանակագրական առումով առաջինն այդ պատկերացմանը հանդիպում ենք ԺԳ դարի մատենագիր Վանական վարդապետի մօտ: Ծանօթագրական բնոյթի մէկ էջանոց մի գրուածքում Վանականը, նկարագրելով Տիրոջ եօթանասուն առաքեալների քարոզչութիւնը՝ Դաղիվանքի անուանադիր «Դաղիի» մասին ներկայացնում է նախորդ մատենագիրներին անյայտ հետեւեալ պատմութիւնը. «Դաղիում՝ յեւթանասնիցն, որ գնաց հրամանաւ Թադէոսի ի Մեծն Հայք եւ ի կողմանս հիւսիսոյ, եւ լուեալ զմահն Աբգարու եւ դարձեալ՝ եմուտ ի Փոքր Սիւնիս, եւ կրաւնաւորեալ անդէն ծածկաբար՝ վախճանեցաւ, եւ տեղին չինեցաւ վանք եւ յանուն նորա կոչեցաւ»[84]: Ի դէպ, կարելի է թերեւս մեծ հաւանականութեամբ ենթադրել, որ բարբառային յորջորջման հետեւանքով ի վերջոյ Դաղէի վանք - Դաղիվանք անուանաձեւը ձեռք բերած հոգեւոր կենտրոնի իրական անուանադիր Թադէոս առաքեալի փոխարէն՝ որպէս եօթանասնից մէկը Դաղէ-Դաղիում անունով առաքեալի մասին նմանատիպ վանական առասպելը ձեւաւորուել է հեղինակի կեանքին նախորդած վերջին ժամանակաշրջանում: Եւ ըստ ամենայնի՝ դա արդիւնքներից մէկն է եղել տուեալ տարածքը Սիւնիքից Խաչենի իշխաններին անցնելուց յետոյ առաջ եկած նոր իրողոյթների (ռէալիաների):

Փոքր Սիւնիք անուանումն այս տարածքի համար առաւել սովորական է դառնում յաջորդ դարից: Հայոց «ՁԿԱ թուին» (=1312 թ.) ընդօրինակուած եւ հետագայում Բանանցի Թարգմանչաց անապատում գտնուած Աւետարանի յիշատակարանում իբրեւ պատուիրատու հանդէս է գալիս՝ «...Գրիգոր իշխան Հայոց՝ տէր եւ պարոն Փոքր Սիւնեաց, *Հանդաբերդոյ եւ Ականւոյ եւ բարձր լերանց ծովակին Գեղամայ, Սոթից մինչեւ ի Շաղուագայ...»*[85]: *Ծարայ վանքի կորսուած գեղաքանդակ խաչքարի վրայ Ցովհ. Շահխաթունեանցը եւ Մ. Բարխուդարեանցն ընթերցել են. «...ես՝ Սայտի, որդի պարոն Շանչին, ... ի թուին ՊՀԹ [=1430 թ.], տեղեացս տէր եւ պարոն* Փոքր Սիւնեաց, *Ականայ, Հաթերքոյ եւ Հանդաբերդոյ եւ ծովակին Գեղամայ մինչ ի Շաղվաքայ, կանգնեցաք զխաչս...»*[86]: *ԺԷ դարում Առաքել Դաւրիժեցին հետեւեալ ձեւով է գրում նախորդ դարի յայտնի հոգեւորական Ցովհաննիսիկ Ծարեցու մասին. «Ի սոյն թուին եղեւ վախճան մեծ եւ երանաշնորհ վարդապետին մերոյ Ցովհաննիսի, եւ զի էր նա ի յերկրէն Ծարայ՝* Փոքր Սիւնիս *կոչեցելոյ, ի վանիցն Դաղիու սրբոյ*

84 *Այլ բան է ասացեալ* Վանական վարդապետին,– *Գիրք թղթոց*, Տփխիս, 1901, էջ 536: Նոյն բնագիրը տե՛ս նաեւ՝ **Միխայէլ Ասորի**, *Ժամանակագրութիւն*, Երուսաղէմ, 1871, էջ 33:

85 *ԺԴ դարի հայերէն ձեռագրերի յիշատակարաններ*, Կազմեց **Լ. Ս. Խաչիկեան**, Եր., 1950, էջ 84:

86 **Մ. եպս. Բարխուտարեանց**, *Արցախ*, էջ 408; *Դիւան հայ վիմագրութեան*, պրակ V, էջ 225:

© National Library of Armenia

առաքելոյն...»[87]: Գրիգոր Տաթեւացու քարոզգրքի՝ 1684 թ. ընդօրինակութեան յիշատակարանում արտագրութեան վայր է նշւում. «...ի յերկիրս Ծար, Փոքր Սիւնիս կոչեցեալոյ, ի սուրբ վանս Կուսանաց, ընդ հովանեաւ Դաղէի սուրբ առաքելոյն եւ սուրբ Կաթուղիկէին եւ Սուրբ Աստուածածնին եւ ամենազաւր սուրբ նշանին Մարդաղաւնեաց...»[88]:

Նշուած ուշ եւ վերափոխուած պատկերացումներն, ինչպէս նշեցինք, պատճառ են եղել չփոթելու այս Ծար - Փոքր Սիւնիքը աշխարհացոյցեան Արցախի ամենահարաւային Սիսական-ի Կոտակ գաւառի հետ: Սակայն ակադ. Ս. Երեմեանը աներկբայօրէն պարզաբանեց, որ «Աշխարհացոյց»-ի եւ Մովսէս Դասխուրանցու ուղղակի տեղեկութիւնների հիման վրայ վաղմիջնադարեան Սիսական-ի Կոտակ (կամ Սիսան, Սիսական Ոստան) գաւառը յստակօրէն տեղորոշւում է Արցախի ամենահարաւային հատուածում՝ հասնելով մինչեւ Արաքս գետի ափերը: Բնականաբար, նա նկատի ունէր նախ եւ առաջ Մովսէս Դասխուրանցու (անուանելով վերջինիս, ինչպէս շատ ուրիշներ՝ Կաղանկատուացի) «Աղուանից Պատմութեան» մէջ Սիսան եւ Սիսական կոչուած գաւառի յիշատակութիւնը: Մանրամասնենք, որ Բայլականի մահմեդական իշխանաւորների մի աւարառութեան մասին (Թ դ. 40-ական թթ. սկզբին) Ժ դարի հեղինակը պատմում է այսպէս. «...եկին, հասին Բաղականացիքն եւ արարին վնաս Սիսան, Տրոյ եւ Ամարաս գաւառաց: Եւ ել Եսայի անուանեալն Աբու Մուսէ ի վերայ նոցա եւ կոտորեաց զնոսա»[89]: Միւս տեղեկութիւնը փաստօրէն Դիզակի իշխանութեան գաւառների թուարկումն է՝ կատարուած հիւսիս - հարաւարեւելք ուղղութեամբ, երեք շարքով. «Վերին Վայկունիք → Բերձոր → Սիսական // Հաբանդ → Ամարաս // Պազկանք → Մխանք → Տրի գաւառ»[90]: Դրանց համադրութիւնից երեւում է, որ Սիսան - Սիսական [-ի Կոտակ] գաւառը պէտք է տեղադրել Հակարի գետի եւ Հադրութի գետակի ստորին հոսանքների միջեւ: Ըստ վերը բերուած վկայութիւնների տրամաբանութեան՝ նրանից հիւսիս-արեւմուտք ընկնում էր Բերձոր գաւառը, դէպի հիւսիս՝ Հաբանդը, իսկ դէպի հիւսիս-արեւելք՝ Ուտիքի Տրի գաւառը:

Յաւելենք, որ իբրեւ հարաւային գաւառ («ի կողմանս հարաւոյ») Սիսական-ի Կոտակը «Սիսականեացն [ՊԱ a գրչագրում՝ Սիսաւանեացն] գաւառ» ձեւով յիշատակւում է նաեւ Մովսէս Դասխուրանցու «Աղուանից Պատմութեան» կազմում բառացի արտագրութեամբ մեզ հասած, այսպէս կոչուած «684 թ. պատմութեան» մէջ[91]: Դէպի այդ գաւառը «չուեալ էր» (այսինքն՝ իբրեւ աւատատէր իր տիրոյթների մի մասում «շրջայց» էր կատարում) Ջեւանշէր Աղուանից իշխանը[92]:

Հարկ է նշել, որ Ս. Երեմեանի մնացեալ կարծիքները՝ Միւս Հաբանդ եւ Սիսական-ի Կոտակ գաւառների նոյնացման եւ վերջինիս ծագման ժամանակի մասին,

87 Առաքել Դաւրիժեցի, *Գիրք պատմութեանց*, Աշխատասիրութեամբ Լ. Ա. Խանլարեանի, Եր., 1990, էջ 461:

88 ՄՄ ձեռ. թիւ 2067, թ. 471ա: Հմմտ. Պ. Զորաբեան, *Քարվաճառի էթնիկ դիմագծի հարցի շուրջ*, էջ 219:

89 *ՊԱ*, Գ.ի /իա/, էջ 331:

90 *ՊԱ*, Գ.ժթ /ի/, էջ 327:

91 Այդ սկզբնաղբիւրի մասին, որը Է դարի 30-80-ական թթ. անցքերի մասին ժամանակակից ականատեսի չափազանց հաւաստի շարադրանք է պարունակում, մանրամասն տե՛ս **Հ. Հ. Ակոպյան**, *Албания-Алуанк*, էջ 196-201; **Հ. Ակոպյան**, *О хронологии последних событий в "Истории 684 года"*,— "Кавказ и Византия", вып. 6, Ер., 1988, էջ 24-36: Նոր քննական բնագիրը՝ **Անանուն**, *684 թուականի պատմութիւն*, Առաջաբանը եւ գիտա-քննական բնագիրը **Ա. Յակոբեանի**,— ՄՀ, հտ. Դ-Ե, Է. դար, Անթիլիաս, 2005, էջ 795-895:

92 *ՊԱ*, Բ.լգ, էջ 220; ՄՀ, հտ. Դ-Ե, էջ 854, նախ. 44:

ինչպէս արդէն ցոյց է տուել Բ. Յարութիւնեանը, թւում են բաւարար չափով չհիմնաւորուած: Երջանկայիշատակ ակադեմիկոսը գրում էր. «...571 թ., երբ ամբողջ Արցախը միացուեց Սիւնիքին եւ Միւս Հաբանդը դարձաւ Սիւնեաց նախարարութեան կենտրոն, այս գաւառը կոչւում էր նաեւ Սիսական-ի-Ոստան կամ Սիսական-ի-Կոտակ: Վերջինս հոմանիշ է Փոքր Սիւնիք անուան»[93]: Ս. Երեմեանի համար հիմք էր ծառայել, անշուշտ, Պատմահօր տեղեկութիւնը, որը Ամարաս գիւղը, ուր բերուեց եւ հողին յանձնուեց Մասքթաց աշխարհում նահատակուած Գրիգորիսի դին, վերագրում է «Փոքր Սիւնիքին» («Զոր բարձեալ սարկաւագաց նորին, բերելով ի Փոքր Սիւնիս, թաղեցին յԱմարաս աւանի»[94]): Այնինչ՝ Փաւստոս Բուզանդն այստեղ նշում էր Հաբանդ գաւառը. «Եւ ապա բարձին զնա, որք ընդ նմա երթեալ էին ի գաւառէն Հաբանդայ, եւ բերին ի գաւառն իւրեանց, ի կողմանց Աղուանից ի սահմանս Հայոց, ի Հաբանդ, ի գեօղն, որ անուանեալ կոչի Ամարաս: Եւ եդին զնա առ եկեղեցեաւն, զոր շինեալ էր առաջնոյն մեծին Գրիգորի, հաւուն Գրիգորիսի...»[95]:

Ս. Երեմեանի նշած գաւառների համադրման կապակցութեամբ առաւել ընդունելի է Բ. Յարութիւնեանի մօտեցումը, համաձայն որի՝ հարաւային Արցախի Հաբանդ եւ Սիսական-ի Կոտակ (իսկ ըստ մեզ՝ թերեւս նաեւ այլ յարակից) գաւառների մտնելը Սիւնիք աշխարհի կազմի մէջ՝ «Փոքր Սիւնիք» անուան տակ (իսկ ըստ մեզ՝ թերեւս նաեւ զուգահեռ «Հաբանդ» անուան), աւելի հաւանական է վերագրել ոչ թէ Զ, այլ Դ դարի իրողութիւններին[96]: Կարելի է յաւելել միայն, որ դա պարտադիր չէ կապել անպայման Վարազվաղան Սիւնու եւ «Գահնամակ»-ում առկայ «Սիւնեաց երկրորդ» տոհմաճիւղի առաջացման հետ (Դ դ. երկրորդ կէսում), քանի որ վերջին անունն աւելի մեծ հաւանականութեամբ կարող էր վերաբերուել Վայոց ձորի կամ Բաղքի զուգահեռ իշխանական ճիւղերին, ինչպէս որ ունենք հետագայում: Սիւնիքի վարչական ենթակայութեան տակ Արցախի մի մասի մտնելը (եւ առաւել մեծ հաւանականութեամբ՝ հէնց հարաւային մասի, որը զգալիօրէն հեռու էր ընկած Պատմահօր ճանաչած ուտիք-արցախեան երեք իշխանական տների՝ Մաւդէացիների, Գարդմանացիների եւ Ուտէացիների՝ մեզ բաւականին յայտնի կենտրոններից) կարող էր տեղի ունեցած լինել նաեւ Դ դ. սկզբներին կամ է՛լ աւելի վաղ դարաշրջանում: Յիշենք, որ ըստ Մովսէս Խորենացուն հասած պատկերացումների՝ Գարդմանացի, Մաւդէացի եւ Ուտէացի իշխանական տոհմերի աւանդական նախահայր Առանն ինքը ծագում էր «Սիւնեաց» նախահայր Սիսակից[97]: Իբրեւ առայժմ վարկածային հարցադրում՝ կարելի է նկատի ունենալ, որ հարաւային Արցախի հատուածը ուշարտաշխեան եւ վաղարշակունեան Մեծ Հայքի Սիւնիք-Սիսական աշխարհից կարող էր անջատուել այն նոյն պահին, երբ տեղի էր ունեցել անտիկ հեղինակների ճանաչած Սոդուկէնէ-Մաւդէք

93 **Ս. Տ. Երեմեան**, *Հայաստանը ըստ «Աշխարհացոյց»-ի*, էջ 70:

94 *ՊՀ*, Գ.գ, էջ 260; ՄՀ, հտ. Ա, էջ 2011, նախ. 8:

95 **Փաւստոսի Բուզանդացւոյ** *Պատմութիւն Հայոց*, Վենետիկ-Ս.Ղազար, 1933, դպր. Գ, գլ. Զ, էջ 7; ՄՀ, հտ. Ա, էջ 283, նախ. 15: Վկայութեան բնագրագիտական քննութիւնը՝ **Հ. Ակոպյան**, *"История Армении" Фавста Буванда как источник "Повести о Вачагане" (снова о первом и втором дпрутюнах Фавста Буванда)* ,— "Кавказ и Византия", вып. 5, Ер., 1987, էջ 74-75:

96 Մանրամասն՝ **Բ. Յարութիւնեան**, *Հայոց Արեւելից կողմերի վարչական բաժանումն*, էջ 40:

97 *ՊՀ*, Բ.ը, էջ 113; ՄՀ, հտ. Բ, էջ 1859, նախ. 8: Վերջին մանրամասն քննութիւնը տե՛ս **Հ. Սվազեան**, *Խորենացիական աւանդազրոյցի Սիսակ-Առանեան ճիւղը եւ նրա պատմական ատաղձը*,— «Ծուշին Հայոց քաղաքակրթութեան օրրան»..., Եր., 2007, էջ 5-19:

© National Library of Armenia

նահանգի ենթադրելի բաժանումը Սիւնիքի գաւառ Սօղք-Սոթքի եւ նրանից արեւելք ընկած արցախեան գաւառների:

Եւ վերջապէս, 571 թուականից մինչեւ է դարի կէսերը Արցախը Սիսական-Սիւնիքին միացուած լինելու վերաբերեալ Ս. Երեմեանի կաթիքի դէմ է խօսում, թերեւս, նաեւ այն հանգամանքը, որ է դարի սկզբի համար ունենք Ամարասի Մխիթար եւ Մեծ Իրանքի Սիմէոն եպիսկոպոսներին ուղղուած Աբրահամ Աղբաթանեցի կաթողիկոսի յայտնի թղթի իրողութիւնը (607 թ.)[98]: Այդ ժամանակ, ինչպէս յայտնի է, Սիւնիքի եպիսկոպոսը Աբրահամի կողմնակից եւ գաղափարակից Դաւիթն էր[99]:

* * *

Բաբկէն Յարութիւնեանի կողմից կատարուած Սիսական-ի Կոտակ գաւառի առաւել հիմնաւոր քարտէզագրման մէջ[100] էական ճշգրտելիք կայ միայն նրա հարեւան գաւառների խնդրում:

Սկսենք Բերձոր գաւառից: Այս գաւառանունն «Աշխարհացոյց»-ից յետոյ առաջին անգամ յիշատակում է Մովսէս Դասխուրանցին 829 թ. դէպքերի նկարագրութեան մէջ. «...զՍտեփաննոս՝ զկոչեցեալն Աբլ Ասադ, որ էածն զԲաբան եւ եհար զԲաղականեցիսն, որ ի սուր նիզակաց կոտորեցին զԲերձոր գաւառի զաւանսն զՈւռեաց, զԿառնակաշ, զՀակարի եւ զՏափատ»[101]: Այս թուարկման մէջ երրորդը յիշուած Հակարի «աւանը» (տուեալ դէպքում = «ամրոցագիւղ») բոլոր մասնագէտների կողմից իրաւացիօրէն համադրուել է ԺԹ դ. Աքերլուի հետ (Ի դարում գիւղը լքուել է), որը գտնւում էր ներկայումս էլ շէն Հարարի մօտերքից հոսող վտակի ստորին հովտում, Հակարի գետի մէջ նրա թափուելու կէտից 3 կմ հիւսիս-արեւելք[102]: ԺԶ-ԺԷ դդ. մի քանի ձեռագրերի յիշատակարաններում նշուած են Հարար, Փարաջանց եւ Գետուզ գրչական կենտրոն գիւղերը՝[103] «Հակարու», «Հաքարի», «Հաքարու» կամ «Հագարեան» «երկրում»[104]: ԺԹ դարի վերջերում Գտչավանքի վանահայր Առաքել վարդապետ Կոստանդեանցն իր ձեռագիր պատմական աշխատութեան մէջ մի շարք տեղեկութիւններ է հաղորդում «Ագարի գաւառի» մասին եւ նրա մէջ մտցնում նաեւ Օձաբերդ բնակավայրը, այսինքն՝ Խծաբերդ գիւղը Զինգեանակապ-Խաչգետիկ վտակի վերնահովտում[105]:

Կառնակաշ «աւանի» կապակցութեամբ. ըստ Մ. Բարխուդարեանցի՝ իր պատկերացմամբ մինչեւ Երասխ իջնող Բերձոր կամ Բերդաձոր գաւառի տարածքում ԺԹ դ. վերջում հայկական «աւերակ» կամ «կիսաւեր» «եկեղեցիներ եւ հանգստարաններ» կային հետեւեալ գիւղերում. «1) Դիրի՝ Երասխի ձախ ափում... 2) Թոմաս... 3) Բայաթ, այժմ՝ Բաշարաթ... 4) Հին-Փոքր Թաղլարում... 5) Հորնաւոտում... 6) Հատք... 7) Դաշտահատ... 8) Զէք... 9) Փարաջան... 10) Հին-Մեծ Թաղլարում... 11) Եաւրին խութ... 12) Երկաթաւոր (Դամիրլու)... 13) Սափիան... 14) Թումասլու... 15) Ամուտուկա... 16) Խոջիկ... 17) Պատար... 18) Սարգիս... 19) Ջղջիկ, այժմ՝ Ջաղջիկ... 20) Սպիտակ շէն... 21) Ջամին գիւմ (գոմ)... 22) Գառնակաշ... 23) Հակարի...: Դոլանլար...: Խանձաձոր...: Ցարար...: Խցաբերդ...: Ղալա-ղշլաղ...»[106]: Եթէ բացի Հակարի-Աքերլուից եւ Գառնակաշից այս ընդարձակ ցուցակում[107] լինէին նաեւ Ուռեացը եւ Տափատը, ապա կարող էինք մտածել, թէ Մ. Բարխուդարեանցն իր ունեցած տուեալներին պարզապէս աւելացրել է Մովսէս Դասխուրանցու յիշատակած Բերձոր գաւառի 4 աւանները: Սակայն այդ երկուսի բացակայութիւնը ստիպում է մտածել, որ գիտնական եպիսկոպոսը Հակարիի եւ միւսների կողքին ուղղակի տուեալներ է ունեցել նաեւ Գառնակաշ (<Կառնակաշ) գիւղատեղիի մասին:

98 ՊԱ, Բ.խթ, էջ 276-279; **Աբրահամ Աղբաթանեցի**, *Պատասխանի ի Հայոց թղթոյն Մխիթարա Ամարասա եպիսկոպոսի*, Գիտա-քննական բնագիրը **Ա. Յակոբեանի**,– ՄՀ, հտ. Դ, Է դար, Անթիլիաս, 2005, էջ 21-37:

99 ՊԱ, Բ.խթ, էջ 276; **Ստեփաննոսի Սիւնեաց եպիսկոպոսի** *Պատմութիւն տանն Սիսական*, գլ. ԻԵ-ԻԷ, էջ 74, 76, 82; *Պատմութիւն նահանգին Սիսական*, ԻԶ-ԻԸ, էջ 103, 105, 112; ՄՀ, հտ. Դ, էջ 21:

100 Տե՛ս **Բ. Յ. Յարութիւնեան**, *Մեծ Հայքի վարչա-քաղաքական բաժանման համակարգն ըստ «Աշխարհացոյց»-ի* (Մաս Ա) գրքին կից քարտէզը (Եր., 2001):

101 ՊԱ, Գ.ժթ /ի/, էջ 327: Բերուած է այս դէպքում գրչական սխալներից զերծ մնացած Բ խմբի գրչագրերի ընթերցումը:

102 Տե՛ս *ՀՅՇՏ Բառարան*, հտ. 1, էջ 134:

103 ՄՄ, ձեռ. թիւ 4932, թ. 267բ-268ա; թիւ 3437, թ. 239ա; **Յ. Թօփճեան**, *Ցուցակ ժողովածուաց Դաղեան Խաչիկ վարդապետի*, մասն Բ, Վաղարշապատ, 1900, էջ 31; **Ս. Տէր-Աւետիսեան**, *Ցուցակ ձեռագրաց Նոր Ջուղայի Ամենափրկիչ վանքի*, Ա, Վիեննա, 1970, էջ 127; *Ցուցակ հայերէն ձեռագրաց Լոնդոնի Վելքոմ ինստիտուտի գրադարանի*,– «Բանբեր Մատենադարանի», 15, էջ 323; **Ս. Կարապետեան**, *Հայ մշակոյթի յուշարձանները*, էջ 161:

104 Սամուէլ Կարապետեանը (նշ. աշխ., էջ 185) «Հակարի երկրի» հետ է կապում նաեւ ԺԴ դ. մի յիշատակարանում նշուած Հայքարա Ջորը իր Անապատիկ գիւղով (*ԺԴ դարի հայերէն ձեռագրերի յիշատակարաններ*, էջ 450, 621), սակայն բնագրից երեւում է, որ դա Կորճայքի յայտնի շրջանն է: Ի դէպ, ըստ Գեղամ Բադալեանի մի բանաւոր կռահման՝ Մեծ Զաբ գետի (հայկական աղբիւրներում՝ Զաւ) միջին հոսանքի շրջանում զարգացած միջնադարից մինչեւ նոր ժամանակները Հաքեարի (կամ, ինչպէս Ծաճուկ գաւառի Անապատիկի գրչագրում է՝ Հայքարի) անունը կրած այդ գաւառակը կարող է կապուած լինել աշխարհացոյցեան Կորճայք նահանգի «Այլգառք» գաւառի հետ (տե՛ս **Բ. Յ. Յարութիւնեան**, *Մեծ Հայքի վարչա-քաղաքական բաժանման համակարգն*, էջ 286): Սակայն «Աշխարհացոյց»-ի քննական բնագիրը կազմելիս մենք նկատեցինք, որ ընդարձակ խմբագրութեան «զԱյգառս» եւ համառօտ խմբագրութեան «զԱյ» ընթերցումների հիման վրայ պէտք է աւելի հաւանական համարուի երկի բնօրինակում «զՁա[ւ] գա[ւա]ռ» գաւառանունն վերականգնելը: Այն պիտի նոյնանար Զաւի հովտում Եղիշէի ճանաչած Ծաւդէից (=Զաւդէից) երկրին (Պատմաճօր եւ Զօրանամակի՝ Կադմէաց, Գահնամակի՝ Կադմէից [*փխ* Կասպէից], Ագաթանգեղոսի՝ Կորդովտաց) եւ հոռոմէական ու ասորական աղբիւրների Զաբդիկենէ - Բեթ Զաւդայ մարզին, որը, հակառակ պատմագրութեան մէջ ձեւաւորուած ծաւալուն աւանդոյթի, կապ չի ունեցել Բգաբդէ քաղաքի շրջանի հետ Տիգրիսից արեւմուտք (հմմտ. **Ս. Կանայեանց**, *Անյայտ գաւառներ հին Հայաստանի*, Վաղարշապատ, 1914, էջ 14): Ըստ ամենայնի՝ «Աշխարհացոյց»-ի որեւէ վաղ արտագրող վրիպել է բառասկզբում կրկնուող Զ-երից մէկը, ապա՝ գրիչների մօտ յաճախ նկատուող անկանոն գրութեան հետեւանքով Ա-ից յետոյ աւելացուել է Ց տառ (թերեւս նոյն ուղիով է առաջ եկել նախորդող գաւառանուան «Այտրուանք» ձեւը. ունենք նաեւ Այպահունիք, Թրայփի, Տայգրեան եւն): Դա յաջորդ գրչին պատճառ է տուել՝ ԶԱՑԻ բառի վերջում վրիպելու ԳԱԻԱՌ-ից առաջ դժուար լսելի դարձած Ի-ը: Վերջապէս՝ համառօտ խմբագրութիւնը կազմելիս «խոտանուել» է հարեւան անուններում բացակայող «գաւառ» բաղադրիչը. իրականում «Աշխարհացոյց»-ի հեղինակն, ըստ ամենայնի, հիմք է ունեցել ընկալելու այն հէնց իբրեւ տեղանուան բաղադրիչ ո՛չ միայն այս, այլեւ ուրիշ դէպքերում՝ նշելով, օրինակ՝ «զՄարի գաւառ, զԹրաբի գաւառ» (նոր ժամանակներում՝ Մերգեւեր եւ Թերգեւեր): Իսկ ընդարձակ խմբագրութեան միակ գրչագրում կամ նրա մայրում տեղի է ունեցել նախագաղափարի՝ հաւանաբար յապաւուած ձայնաւորով ԳԱԻ[Ա]Ռ-ի Ի-ի վրիպումն ու բառի ընկալումը իբրեւ նախորդի «-գառ» բառավերջ, որին արդէն պէտք է յաւելուէր յոգնակի հայցականի Ս ցուցիչ՝ ԶԱՑ-ԳԱՌ-Ս:

105 Տե՛ս ՄՄ, ձեռ. թիւ 7822, թ. 149բ:

106 **Մ. եպս. Բարխուտարեանց**, *Արցախ*, էջ 400-401: Այստեղ «Հակարի» անունը տպագրական վրիպակով է (Ծակարի), որի մասին, սակայն, նշուած է գրքի վերջում դրուած վրիպակների ցանկում: Յաւօք, վերջինս անուշադրութեան է մատնուել գրքի վերահրատարակութեան ընթացքում (Եր., «Գանձասար» կենտրոն, 1999), եւ վրիպակը կրկնուել է առանց ծանօթագրութեան:

107 Թէպէտ միեւնոյն ժամանակ նշելի է, որ ցուցակում պակասում են առնուազն Վաղաւեր (Թեզխարաբ), Արփագեադուկ, Հինշէն, Եղցահող եւ Կանաչթալա գիւղերը, իսկ Խոջիկը, օրինակ, որտեղ ԺԹ դարի վերջի միանաւ մզկիթ է, թերեւս կասկածելի է:

© National Library of Armenia

Մ. Բարխուդարեանցն այս տարածքում տալիս է Աքերլուից 3-4 կմ արեւելք գտնուող մի ամրոցի նկարագրութիւն, որը դժուար չէ համադրել Մովսէս Դասխուրանցու յիշատակած Կառնակաշի հետ. «Ղալալու բերդ. որի սարն առանձնացած է Բաշարաթ սարի արեւմտեան հանդէպ եւ Բազմին (Բեզմին) սարի հարաւային հանդէպ: Առանձնացած է իւր շրջապատից եւ բերդասարս, որ ունի 3600 ոտք բարձրութիւն եւ որի շուրջն ահագին քերթեր են: Հնուց պարսպուած են մուտքի կողմերն եւ հարկ եղած տեղերն: Ամրոցիս մէջ եւս կան հին շինութեանց շատ բեկորներ եւ աւերակ մատուռ»[108]: Նշուած տեղում՝ Հակարիի Խաչգետիկ-Զինգեանակապ վտակի ձախափնեայ մի հսկայական, ձեռակերտ, կոթողի նմանուող ժայռի գագաթին (բարձրութիւնը՝ աւելի քան 150, վերին հարթակի չափերը՝ 20x100 մ) գտնուող ամրոցի նախնական հետազօտութիւնը 2007 թ. սեպտեմբերին (գրող Կիմ Բակշիի, լուսանկարիչ Յակոբ Բերբերեանի եւ քաշաթաղցի Մամիկ Սարաջեանի մասնակցութեամբ[109]) ցոյց տուեց, որ այն յստակօրէն կառուցուած է խաչեն-դիզակեան դարաշրջանի բերդաշինական տեխնիկայով:

108 Մ. եպս. Բարխուտարեանց, *Արցախ*, էջ 402: Հմմտ. Ս. Կարապետեան, *Հայ մշակոյթի յուշարձանները*, էջ 198: Այս ամրոցի ուշագրաւ նկարագրութիւն է տալիս նաեւ Յահէն Մկրտչեանը՝ անուանելով այն Ղալալուի բերդ-քարայր. «...Քերծի գլխին աւերակ գիւղատեղին է: «Գիւղամիջում» մի շինութիւն կայ, առանց դռների եւ լուսամուտների: Ծէնքի ներսից քերծի միջով քարէ սանդուղքը իջնում է դէպի ստորգետնեայ գետակը» (Յ. Մկրտչեան, *Լեռնային Ղարաբաղի պատմա-ճարտարապետական յուշարձանները*, էջ 91. հմմտ. Ш. Мкртчян, *Историко-архитектурные памятники Нагорного Карабаха*, էջ 103):

109 Հմմտ. А. Акопян, *Крепость Карнакаш – Галалу у села Хакари в Кашатахском районе*,– "Голос Армении", 11.10.2007, էջ 7. հայերէնը՝ *Կառնակաշ - Ղալալու ամրոցը Քաշաթաղի շրջանի Հակարի գիւղի մօտ*,– «Գոլոս Արմենիի», 20.10.2007, էջ 6:

Պարիսպների պահպանուած հատուածները շարուած են տեղի բազալտի կիսասրբատաշ, միջին չափսի մշակուած քարերով եւ կրաշաղախով: Շրջակայքում ամենուր թափուած են զարգացած միջնադարին բնորոշ խեցեղէնի բեկորներ:

Տրի գաւառի կապակցութեամբ. գաւառը մի կողմից, ինչպէս տեսանք, յարում էր Սիսական-ի Կոտակին[110], միւս կողմից՝ Ամարաս եւ Մխանց գաւառներին[111]: Ըստ «Պատմութիւն Աղուանից»-ի Բ գրքում բառացի արտագրուած «Տեսիլն Վեհկի» վերտառութեամբ Յիշատակագրութեան՝ «Ծածկեալ ի գաւառին Արցախայ, ի Մխանց տոհմին, ի վայրս Կաղսետու [ՊԱ a գրչագրում՝ Կաղսետոյ]»[112] սրբոց նշխարները հանելը եւ Պարտաւի կաթողիկոսանիստ հասցնելը Աբաս Աղուանից հայրապետը յանձնարարում է «զ Դանիէլ մեծահաւատ քահանայն Տրիոյ»: Ըստ այսմ, ինչպէս ցոյց ենք տուել Գտչավանքի շինարարական արձանագրութեանը նուիրուած աշխատանքում, Տրին անհրաժեշտ է քարտէզագրել Կարեագինո-Ծիզուլի քաղաքի շրջակայքում եւ դէպի արեւելք ու հարաւ, արեւմուտքում՝ Ուրեանսար - Կաւաքասար - Հորադիս գծից մինչեւ Գեաւուրարխի ջրանցքն արեւելքում[113]: Նշուած վիմագրում Բէլուկան վայրի, այսինքն՝ Բայլականի վերագրումը Դիզակի տիրոյթներին վկայում է դէպի արեւելք Տրի գաւառի ձգուածութեան մասին. Հիւսիս-արեւելքում այն յարում էր Ռոտ Պացեան, իսկ արեւելքում Առան-ռոտ ուտիքեան գաւառներին:

110 ՊԱ, Գ.ի /իա/, էջ 331 («...արարին վնաս Սիսական, Տրոյ եւ Ամարաս գաւառաց»):

111 ՊԱ, Բ.զ, էջ 120-121; Գ.ժթ /ի/, էջ 327 («...Ամարաս, Պազկանք, Մխանք, Տրի գաւառ»); Գ.ի /իա/, էջ 331:

112 Հմմտ. Խոնաշէն գետակի վերնահովտում ներկայիս Կաղարծի գիւղի անուան հետ:

113 Ա. Յակոբեան, *Գտչավանքի շինարարական արձանագրութիւնը*, էջ 270, 299 (քարտէզը):

Ընդ սմին Ծիզուլիից 10 կմ հարաւ-արեւելք գտնուող Քիւրդլար յորջորջուած գիւղի տակով (որը գուցէ հէնց Գտչավանքի շինարարական արձանագրութեան մէջ յիշատակուող Քրդագետ բնակավայրն է), անցնում է մի գետակ, որն սկսւում է Հադրութից հիւսիս բարձրացող Վնեսայ (Արգունաշ) լեռան հիւսիսային լանջերից, Քիւրաթաղ (Հիւքիւրաթաղ-Դուդուկչի) եւ Իտէլեցիք (Էդիլլու) գիւղերից վեր: Ծիզուլի քաղաքի շրջագծի մէջ այդ գետակը մօտենում է Իշխանագետի ու Մանասի (յորջորջուած՝ Քեօնդալանչայ, Գտչավանքի վիմագրում, ըստ ամենայնի՝ Հզարագետ) ձորակներին, մի քանի կիլոմետր հոսում նրանց զուգահեռ, բայց յետոյ հեռանում է եւ իր առանձին, տարուայ մեծ մասը ցամաք հունով թջնում մինչեւ Արաքս: Այդպէս են նաեւ միւս երկու գետերը, եւ բնութեան այս հետաքրքիր պատկերը՝ երեք գետերի մօտենալը մի կէտում, ապա հեռանալը, հիմք է տուել մեզ ենթադրաբար առաջ քաշելու եւս մի վարկած. հնարաւոր է, որ հէնց դրանից է ծագել գաւառի «Տրի» անունը: Այն ուղղակի կարող էր «երեք» նշանակել (գուցէ [Տրի-ռոտ]-ից - «Երեք գետ». հմմտ. Առան-ռոտ, Աղանդ-ռոտ, Ճուաշ-ռոտ, Ռոտ Պացեան, Ռոտ-ի Բաղայ եւն), ինչպէս ունեն հնդեւրոպական մի քանի, այդ թւում՝ որոշ արեւմտաիրանական լեզուներ[114]:

Իր տարածքի գոնէ կենտրոնական մասով թերեւս միարժէք տեղորոշում ունի Միւս (կամ Փոքր) Հաբանդ գաւառը՝ Հադրութի գետակի եւ Իշխանագետի վերնահովիտներում եւ Մանասի միջնահովտում: Արեւմուտքում այն Արցախեան լեռնաշղթայով սահմանակցում էր Բերձոր գաւառին: Վերջինիս՝ միանշանակօրէն Հակարիի միջին հոսանքի ձախափնեակում գտնուելն ապացուցող վերը բերուած ծաւալուն հիմքերը թոյլ չեն տալիս ընդունելի համարել Բ. Յարութիւնեանի պնդումն այն մասին, թէ արցախեան Հաբանդի՝ Միւս կամ Փոքր կոչուած լինելը պիտի նշանակէր նրա հարեւանութիւնը սիւնիքեան նոյնանուն գաւառի հետ անպայման նաեւ «Աշխարհացոյց»-ի ժամանակներում[115]: Ի դէպ, նոյնքան միանշանակ է նաեւ Ստեփաննոս Օրբէլեանի բազմաբնոյթ տեղեկութիւնների (այդ թւում՝ գիւղացանկերի) հիման վրայ աշխարհացոյցեան Սիւնիքի Հաբանդ եւ Աղահեջք գաւառները հարաւից-հիւսիս Հակարի գետի ու նրա Հոչանց օժանդակի աջափնեակում տեղորոշելու անհրաժեշտութիւնը[116]: Ուստի հնարաւոր չէ համաձայնել Ղ. Ալիշանի, Ս. Երեմեանի եւ Բ. Յարութիւնեանի հեղինակած քարտէզներում այդ գաւառների արեւելեան սահմանները Արցախեան լեռնաշղթային հասցնելու հետ եւս[117], որը ոչ մի կերպ չի համապատասխանում միջնադարեան սկզբնաղբիւրների տեղեկութիւններին եւ միմիայն կրկնում է ԺԹ դ. ցարական Ռուսաստանի ստեղծած Զանգեզուրի գաւառակի (ուեզդի) արեւելեան սահմանագծի պատկերը:

Թերեւս միարժէք է նաեւ Միւս Հաբանդից «Աշխարհացոյց»-ի շարադրման ժամանակաշրջանից յետոյ ինչ-որ ձեւով առանձնացած Ամարաս գաւառ(ակ)ի տե-

114 Նոյն տեղում, էջ 271-272: Հմմտ. Հ. Աճառեան, *Հայերէն արմատական բառարան*, հտ. Բ, էջ 576-577; Т. В. Гамкрелидзе, В. В. Иванов, *Индоевропейский язык и индоевропейцы*, II, էջ 845: «Ռոտ» բաղադրիչի մասին տե՛ս Հ. Հիւբշման, *Հին Հայոց տեղւոյ անունները*, էջ 284-285:

115 Բ. Յարութիւնեան, *Հայոց Արեւելից կողմերի վարչական բաժանումն ըստ «Աշխարհացոյց»-ի*, էջ 36:

116 Առաւել մանրամասն տե՛ս Ա. Յակոբեան, *Հակարիի վերնահովտի նորայայտ վիմագրերը*, էջ 277-279 (քարտէզը՝ էջ 323):

117 Տե՛ս նաեւ Հ. Ղ. Ալիշան, *Սիսական. տեղագրութիւն Սիւնեաց աշխարհի*, էջ 265-271; Ս. Տ. Երեմեան, *Հայաստանը ըստ «Աշխարհացոյց»-ի*, էջ 32:

© National Library of Armenia

ղորոշումը[118]*: Թ դարում այն կարող էր ընդգրկել Ե դարի Հաբանդի մէջ մտնող Մանաս գետի ամբողջ միջնահովիտը՝ նրա Քոչիզ (Քոչուս) եւ Աղօղլան կոչուած Ամարաս վտակի ստորին աւազանով*[119]*: Այդտեղ եւ մասամբ դրանից հիւսիս, Դիզակի իշխանութեան տարածքի մի հատուածում ԺԶ դարում ձեւաւորուեց Քոչիզի մելիքութիւնը, Տոմատեն գիւղում նստող Մելիք-Փաշայեանների տոհմի գլխաւորութեամբ*[120]*: Ղարաբաղի բեկլարբեկ դարձած Մելիք Եգանը Տող բերդաւանի իր ապարանքի մուտքի շուրջը փորագրուած 1737 թ. վիմագրում դեռ թուարկում է այն իր ենթակայութեան տակ գտնուող մահալների շարքում. «...մէկն՝ Թալիշ, մէկն՝ Ջար[ա]յպ[եր]թ, մէկն՝ Խաչան, մէկն՝ Վարնդայ, մէկն՝ Քոչէզ, մէկն՝ Տուզաղ»*[121]*: Զարգացած միջնադարում նոյն կերպ Դիզակի մաս կազմած եւ ուշ միջնադարում նաեւ Վերէնդէ, Բրենտէ անուններով յայտնի դարձած մելիքութեան հետ միաւորուելուց յետոյ Քոչիզն ապահովեց ընդարձակ Վարանդայ գաւառի (մահալի) ձեւաւորումն իր նշանաւոր մելիքական տոհմով (Մելիք-Շահնազարեաններ): Տեղին նշենք, որ ինչոր պատճառով Րաֆֆու «Խամսայի մելիքութիւնները. 1600-1827» մենագրութեան մէջ (Թիֆլիս, 1882) տեղ գտած ;չիմացութեան հետեւանքով Քոչիզի մելիքութեան պատմութիւնը, ըստ էութեան, չի արտացոլուել նոր մասնագիտական գրականութեան մէջ (այդ թւում Արցախի բազմադարեայ պատմութիւնն ամփոփող Բ. Ուլուբաբեանի եւ Վ. Բալայեանի մենագրութիւններում), իսկ երբեմն անգամ լուրջ շփոթութիւնների առարկայ դարձել: Այդպիսի օրինակ է Սեդրակ Բարխուդարեանի եւ Յակոբ Փափազեանի մօտ առկայ շփոթը Քաշաթաղի կամ Քշթաղի սիւնիքեան մելիքութեան հետ (Խնածախ գիւղում նստող Մելիք-Հայկազեանների գլխաւորութեամբ)*[122]*, որի հիմքում քաշաթաղեան՝ ներկայումս էլ չէն Հոչանց գիւղի «Ղոչազ» (նաեւ՝ Ղոչես) յորջորջման եւ Քոչիզ գաւառանուան որոշ նմանութեան թիւր մեկնաբանութիւնն է եղել*[123]*:*

Ամարաս գաւառից դէպի հիւսիս-արեւելք ընկնում էր ակադ. Ս. Երեմեանի կողմից Մուխուրովասի վայրի հետ իրաւացիօրէն համադրուած Մուխանք-*Մոխանք-Մխանց գաւառը*[124]*: Հարաւից-հիւսիս այն տեղորոշւում է Սեւջրի (Ծարտարի գետակի) վերնահովտում (մինչեւ Ուրեանսար եւ Կարմիր ժայռ բարձունքներով՝ նրա եւ Տրի գաւառի սահմանը), Խոնաշէն գետակի հովտում (մինչեւ նրա՝ Հարթավայր մտնելը), ինչպէս նաեւ Կարկառ գետի աջափնեայ միջնահովտի մի հատուածում, որն արեւելքում հասնում էր, հաւանաբար,*

118 *ՊԱ*, Գ.ժթ /ի/, էջ 327; Գ.ի /իա/, էջ 331: Հմմտ. վերեւում, ծնթ. 111-112:

119 Հմմտ. Ա. Յակոբեան, *Գտչավանքի շինարարական արձանագրութիւնը*, էջ 284-285, ծնթ. 73:

120 Հմմտ. Մ. եպս. Բարխուտարեանց, *Արցախ*, էջ 104-108, 422, ծնթ. 14: Տե՛ս նաեւ Առաքել Դաւրիժեցի, *Գիրք պատմութեանց*, էջ 63 («...Մելիք Փաշիկն ի Քօչիզ գեղջէ...»); *Դիւան հայ վիմագրութեան*, պրակ V, *Արցախ*, էջ 159-161, 166 («Ա[ստուա]ծ ա[ր]հնէ Քոչիզու ժող[ո]վ[ու]րդն...»), էջ 168 («...ի նշխարաց սրբոյն Գրիգորիսի ամփոփեցաք երկրիս Վարանդու եւ Քոչիզու, զի եղիցի այս երկու աթոռս մի»); ՄՄ ձեռ. թիւ 7542 (Աւետարան, 1553 թ., գրիչ՝ Ստեփաննոս եպիսկոպոս), թ. 304ա («գրեցի զսայ Հոգով Սրբով եւ սրբագրչով ի յերկիրս Քոչիզու, ի գեաւղաքաղաքս Էրեր /=Հերհեր/»):

121 Տե՛ս *Դիւան հայ վիմագրութեան*, պրակ V, *Արցախ*, էջ 180-181:

122 Այս մելիքութեան մասին մանրամասն տե՛ս Մ. Հասրաթեան, *Պատմա-հնագիտական ուսումնասիրութիւններ*, Եր., 1985, էջ 155-165:

123 Տե՛ս *Դիւան հայ վիմագրութեան*, պրակ V, *Արցախ*, էջ 194; Յ. Փափազեան, *Մելիք Եգանի ընդունարանի մուտքի վիմագիր արձանագրութիւնը*,– «Լրաբեր հաս. գիտութիւնների» 1985, թիւ 5, էջ 77:

124 Ս. Տ. Երեմեան, *Հայաստանը ըստ «Աշխարհացոյց»-ի*, էջ 71; Բ. Յարութիւնեան, *Հայոց Արեւելից կողմերի վարչական բաժանումն ըստ «Աշխարհացոյց»-ի*, էջ 39:

մինչեւ Ջեխլի բլրաշարից դէպի Կարկառի հունը ձգուող գիծը[125]*:*

Մուխանքից դէպի արեւմուտք, սկսած մօտաւորապէս Քեաթուկ (պրսկ. Գեղուկ - «լեռնանցք») գիւղի հատուածից, Կարկառի եւ նրա Վարարակն օժանդակի աջափնեակով ձգւում էր Պազկանք *(Պածկանք, Պարզկանք, Պարսկանք) գաւառը: Ս. Երեմեանը, ի տարբերութիւն նախորդ եւ յաջորդ շատ գիտնականների, էապէս արժեւորեց նաեւ այս «Պարսականքի» (=Պազկանք, որը այլ քարտէզներում նա կոչում էր նաեւ Բազկան)՝ Ղ. Ալիշանի կողմից կատարուած տեղորոշումը Կարկառի վերնահովտի հատուածում*[126]*: Նկատենք միայն, որ որոշ սրբագրում կատարելով, նրա պատկերացրած տարածքից պէտք է հանել Վարարակնի եւ Կարկառի ձախափնեայ հատուածները (ուր գտնւում էր Պիանք գաւառը) եւ փոխարէնը մտցնել նաեւ Բովուրխանի լեռնազանգուածից հարաւ, Մանաս (Քեօնդալան) գետի եւ նրա Ամարաս վտակի վերնահովիտներում ընկած Աւետարանոցի եւ Հերհերի գիւղախմբերը: Այս վերջին տարածքում է Զ դարի ամենասկզբում շարադրուած «Վաչագանի վէպ»-ը*[127]* յիշատակում «Պազկանք գաւառի»՝ Ամարասից ոչ շատ հեռու գտնուող «Վե[հ]կերտ» բնակավայրը (ամենայն հաւանականութեամբ՝ ներկայիս Քերթ գիւղը՝ անուան սկզբի «Վեհ» բաղադրիչի անկումով), որտեղից, ըստ անանուն հեղինակի՝ մշտապէս Ամարաս էր այցելում Յոբ ճգնաւորը*[128]*: Ընդ սմին նշելի է, որ դժուար է գտնել որեւէ հիմնաւորում՝ գաւառը Երասխի ափերին տեղորոշող ուսումնասիրողների տեսակէտները փաստարկուած քննարկման առարկայ դարձնելու համար*[129]*:*

125 Հմմտ. Ա. Յակոբեան, *Գտչավանքի շինարարական արձանագրութիւնը*, էջ 271-272: Այս աշխատանքում շտապողաբար ենթադրել էինք, թէ Մուխանքը հիւսիսում չի հասել Կարկառի հոսանքին, որի ափերով հաւանաբար տարածուած է եղել Պազկանքի արեւելեան մասը: Բայց ներկայումս դա ուղղելի է՝ ըստ վերը նշուած հեղինակների:

126 Ս. Տ. Երեմեան, *Հայաստանը ըստ «Աշխարհացոյց»-ի*, էջ 77: Հայր Ղ. Ալիշանը գրում էր. «Եւ ո՛չ մի շէն կամ վայր նշանակի ի պատմչաց յայս գաւառ, որով բաց ի սահմանակցութենէ Ամարասայ՝ չէ մարթ գիտել ինչ զհանգամանաց նորին: Այլ թուի թէ ունէր սա զձորահովիտն Գարգարայ, յականց նորա մինչեւ ի դաշտաբերանն Գարգարացւոց... ի հարաւոյ կուսէ առեալ զամենայն հովիտս արեւելագնաց վտակաց, մինչեւ ի ջրբաժին գետոցն, որք ի հարաւ յԵրասխ իջանեն: Եւ ըստ այսմ գրաւի ի սմա հիւսիսային ծայր այժմեանս մեծի Վառանդինայ գաւառի, զոր եւ համարիմք բնիկ վիճակ Շուշայ, յանուն մեծի քաղաքին» (Հայր Ղ. Ալիշան, *Տեղագրութիւն Հայաստանի - Արցախ*,– «Բազմավէպ», 1989, էջ 211. հմմտ. վերահրատարակութեան մէջ՝ Եր., 1993, էջ 107-108): Ի դէպ, մեր նոյն աշխատանքում շտապողաբար ենթադրել էինք, թէ Պազկանքը հաւանաբար ընկած է եղել Կարկառի աջափնեակի առաւելապէս միջնահովտային հատուածում (Ա. Յակոբեան, *Գտչավանքի շինարարական արձանագրութիւնը*, էջ 283), սակայն ներկայումս դա համարում ենք էապէս ուղղելի դէպի վերնահովիտ (տե՛ս նաեւ նախորդ ծանօթագրութիւնը):

127 Այս սկզբնաղբիւրի մասին տե՛ս Ա. Յակոբեան, *«Վաչագանի վէպ»-ը եւ Արշակունեաց թագաւորութեան խնդիրը Դ-Զ դարերի Աղուանքում*,– «Հանդէս ամսօրեայ», Վիեննա-Եր., 2003, էջ 45-142: Քննական բնագիրը՝ Անանուն, *Կեանք եւ վարք Վաչագանայ արքայի*, Առաջաբանը եւ գիտա-քննական բնագիրը Ա. Յակոբեանի,– ՄՀ, հտ. Գ, Զ դար, Անթիլիաս, 2004, էջ 51-112:

128 *ՊԱ*, Ա.իբ, էջ 75; ՄՀ, հտ. Գ, էջ 100, նախ. 1-2 («Երէց մի Վե[հ]կերտու՝ Յոբ անուն, ճգնաւոր եւ յոյժ առաքինի վարուք կեցեալ յաշխարհի, որ ունէր եւ առաքելական շնորհս, քանզի եւ բազմաջան աշխատութեամբ իւրով, հաւատովն եւ սիրովն Քրիստոսի զմեծագոյն աշխարհ մի Արցախա[յ]՝ Պազկանք /a ձեռագրում՝ Պարսականս, z Պարզկանք, / Պազկանց փխ Պազկանք (bcr)] անուն, դարձուցանէր ի ճանապարհէն մոլորութեան ... Սա եկեալ կատարէր բազում անգամ զյիշատակ սրբոյն Գրիգորիսի եւ ասէր երկիցս եւ երիցս առաջի բազմաց...»):

129 Տե՛ս Բ. Ուլուբաբեան, *Արցախի պատմութիւնը սկզբից մինչեւ մեր օրերը*, Եր., 1994, էջ 11; Ս. Սարգսեան, *Արցախ. Պատմաաշխարհագրական ճշգրտումներ*, էջ 59-61; Բ. Յարութիւնեան,

© National Library of Armenia

Յաւարտս կրկին ընդգծենք, որ Վարպակն օժանդակի ողջ աջափնեակում արդէն սկսւում էր մշտապէս Ամարասի կամ Գտչավանքի եպիսկոպոսութեանը ենթակայ եղած հարաւային Արցախի հատուածը, ուր ուշ միջնադարում ձեւաւորուեցին Դիզակի, Վարանդայի եւ Քոչիզի մելիքութիւնները (վերջին երկուսը՝ շուտով միաւորուած): Այստեղ, Վարարակնի ձորակից անմիջապէս հարաւ սկզբնաղբիւրները յիշատակում են Շուշու կամ Շօշու[130] եւ Զառիստ գիւղերը (Գտչավանքի շինարարական արձանագրութեան մէջ առկայ այս վերջին տեղանուան համադրումը հետագայի Զառիսլուի հետ՝ որոշ թէականութեամբ)[131]:

Պիանք գաւառի համար մեր վերջին յօդուածում ցոյց ենք տուել, որ «Աշխարհացոյց»-ում գաւառների թուարկման տրամաբանութեան բացայայտումից յետոյ առաւել ընդունելի տարբերակ կարող է համարուել նրա տեղորոշումը Կարկառի ձախափնեայ վերին վտակների գետահովիտներում, այն է՝ Պտրեցիքի, Մեղրագետի, Տրակետի եւ Վարարակնի (միայն ձախափնեակով): Մանրամասնենք, որ նշուած գետահովիտներում տեղանունների ակնյայտ համադրումներ առայժմ չեն նկատւում, բայց կարեւոր է թւում, որ միայն այդ տեղորոշման դէպքում են իրար համադրելի դառնում «Աշխարհացոյց»-ի երկու բաժինների գաւառախմբերը: Առաջին գաւառացանկի խմբում (Մուխանք → Պիանք → Պազկանք) Պիանքը հարաւային Արցախի՝ արեւելքից արեւմուտք թուարկուած երկու գաւառների միջեւ է, իսկ երկրորդում (Մեծ Իրանք → Պիանք → Հարջլանք) նրա դիրքը միջակայ է արդէն կենտրոնական Արցախի երկու գաւառների միջեւ (ընդ որում դրան յաջորդում է հարաւային նոյն՝ «Պազկանք → Մուխանք» գաւառախմբի յիշատակութիւնը)[132]: Կրկնենք նաեւ, որ Պիանքից դէպի հիւսիս կենտրոնական Արցախի Մեծ Իրանք (կամ Մեծ Առանք) եւ ապա Մեծ Կուանք (կամ Մեծ Կողմանք) գաւառների տեղորոշումները, շնորհիւ այլ աղբիւրներում նրանց մասին եղած մեծաքանակ յիշատակումների, նոր գրականութեան մէջ հաստատուն են[133]: Առաջինը տարածւում էր Տրտու գետի միջին հոսանքից հարաւ՝ ներառելով նաեւ Խաչենագետի հովիտը եւ Շիկաքար ամրոցի շրջանը արդէն Կարկառի աւազանում, իսկ երկրորդը՝ Տրտուի միջին հոսանքից հիւսիս՝ ներառելով նաեւ Մռաւի լեռնաշղթայի հիւսիս-արեւելեան փեշերը մինչեւ դաշտաբերան: Ընդ սմին, ինչպէս տեսանք վերեւում, Տրտուի հովտում երկու գաւառների դէպի արեւմուտք (այսինքն՝ դէպի Հարջլանք եւ Սոթք) տարածման սահմանը ճշտելու համար աղբիւրների ուղիղ վկայութիւնները պակասում են:

Արցախեան հարաւային եւ կենտրոնական գաւառների՝ վերը կատարուած տեղորոշման ճշգրտումները թոյլ են տալիս քննարկման ներկայացնել արաբական աղբիւրի յայտնի վկայութեան ուշագրաւ թուացող մի դիտարկում՝ հետագայում աւելի խոր հետազօտման ակնկալիքով: Թ դ. վերջի արաբ պատմիչ ալ-Բալազուրին է դ. կէսերին Սալման իբն Ռաբիա ալ-Բախիլի զօրավարի նուաճումների նկարագրութեան մէջ ի մասնաւորի նշում է Հայաստանի (Արմինիյայի) արեւելքում ընկած վեց գաւառների հետեւեալ շարքը. «Շակշին [=Շակաշէն], Միսկուան [=Մեծ Կուանք], Ուդ [=Ուտի Առանձնակ], Միսրիան [=Մեծ Իրանք], Հարջալիան [=Հարջլանք], Տիար»[134]: Այս թուարկման մէջ վերջին անունը, որպէս կանոն, համադրուել է (աւելի յաճախ Տաբար կամ Տիր տառադարձութեամբ) Ուտիքի Տրի գաւառանուան հետ[135], որն, ինչպէս տեսանք, նահանգի ամենահարաւային մասում էր (Կարեւագինո-Ցիզուլու շրջակայքում եւ դէպի հարաւ ու արեւելք): Սակայն այժմ, նկատելով արաբական արշաւանքի նկարագրութեան մէջ արձանագրուած 6 գաւառներից հինգի փաստօրէն սպառիչ համապատասխանութիւնը Ուտիք եւ Արցախ աշխարհների կենտրոնական հատուածների գաւառախմբի հետ, գուցէ կարելի է ալ-Բալազուրիի յիշատակած Տիար տեղանունը փնտրել մեր Պիանք գաւառի՝ վերը ճշտուած տարածքում: Իբրեւ վարկած՝ կարելի էր ենթադրել նաեւ նրա կապը Տրակետ [<Տրագետ] գետանուան հիմքի հետ: Այդ տարբերակով, որպէս քաղաքական պատմութեանը վերաբերող դիտարկում՝ կը ստացուէր, որ արաբական տուեալ զօրաշարժը, գոնէ Թ դարի պատմիչին հասած լուրերի համաձայն՝ ինչ-որ կերպ իրօք չի առնչուել հարաւային Արցախի գաւառներին: Կարծում ենք, որ նման տարբերակով Տրակետ անուան հիմքի ընկալման փորձը հնարաւոր է կիրառել դեռեւս բիաինական Սարդուրե Բ արքայի Գանձադուան տարեգրութեան Տերիա երկրանուան ստուգաբանութեան կապակցութեամբ, որը սեպագիր բնագրում յիշատակուած է Կույալբա (>Մեծ Կուանք՝ Տրտուի հովտում) եւ Ուխունե (>Խոխանա[բերդ]՝ Խաչենագետի հովտում) երկրներից յետոյ (բոլոր համադրումներն՝ ըստ երջանկայիշատակ Յովհ. Կարագեոզեանի)[136]:

Այսպիսով, կարելի է ամփոփել, որ Սիսական-ի Կոտակ գաւառը տեղադրւում է Արցախեան լեռնաշղթայի Դիզափայտի լեռնազանգուածի եւ Արաքս գետի միջեւ, արեւմուտքում հասնելով Հակարի գետի ստորին հոսանքին, հիւսիս-արեւմուտքում՝ մինչեւ վերջինիս ձախակողմեան Փոքր Ակերայ յորջորջուած վտակը, որի վերնահովտում գտնուող Հին Թաղեր գիւղի հողատարածքը մտնելու էր Սիսական-ի Կոտակի մէջ: Արեւելքում գաւառը հասնելու էր մինչեւ Հադրութի գետակի վերնահովիտը հարաւից պարփակող Յորի լեռնաբազուկին եւ այդ գետակի ստորին հոսանքին, մինչեւ մօտաւորապէս Ասլանդուզի կամ Խորադիզի գետանցը Արաքսի վրայ, որը Գտչավանքի շինարարական արձանագրութեան մէջ կոչուած է «աւազն Գետահատի»[137]: Նշուած ճշգրտումները, կարծում ենք, իմաստալից կը լինէր նկատի ունենալ պատմական նոր քարտէզներ կազմելիս:

Հայոց Արեւելից կողմերի վարչական բաժանումն ըստ «Աշխարհացոյց»-ի, էջ 39:

130 ԺԵ դարի հայերէն ձեռագրերի յիշատակարաններ, Մասն Ա, էջ 384 (Աւետարան, 1428 թ., գրիչ՝ Մանաւէլ. «...ի յաշխարհիս Աղուանից, ի վիճակս Ամարասայ, ի գե[ւ]ղս Շուշու կոչեցեալ»): Գիւղը Շօշ, Շօշի կամ Շօշու է կոչուած առաւելապէս ԺԸ-ԺԹ դդ. փաստաթղթերում ու գրուածքներում, հայերէն եւ ռուսերէն:

131 Մանրամասն տե՛ս Ա. Յակոբեան, Գտչավանքի շինարարական արձանագրութիւնը, էջ 268-269:

132 Ա. Յակոբեան, Կենտրոնական Արցախի Հարջլանք եւ Պիանք գաւառների տեղադրութիւնն ըստ «Աշխարհացոյց»-ի, էջ 49-50:

133 Հմմտ. նոյն տեղում, էջ 45:

134 Բնագիրը եւ տառադարձութիւնները Ա. Տէր-Ղեւոնդեանի նոր թարգմանութեանն են. Արաբ մատենագիրներ, Ներածութիւնը եւ բնագրից թարգմանութիւնները Ա. Տէր-Ղեւոնդեանի, էջ 274 (հմմտ. նաեւ էջ 499՝ Իբն ալ-Ֆակիհ): Ալ-Բախիլին այդ շրջանները հեծեալների զօրաջոկատ էր ուղարկել Բայլականը պայմանագրով հնազանդեցնելուց եւ ապա Պարտաւ հասնելուց յետոյ:

135 Տե՛ս, օրինակ, Ս. Տ. Երեմեան, Ն. Մառը եւ VII դարի Հայոց «Աշխարհացոյց»-ը,– «Մառը եւ հայագիտութեան հարցերը», Եր., 1968, էջ 82:

136 Ց. Կարագեոզեան, Հայկական լեռնաշխարհը սեպագիր աղբիւրներում, էջ 138-139, 206, 200-201: Հմմտ. Ա. Յակոբեան, Կենտրոնական Արցախի Հարջլանք եւ Պիանք գաւառների տեղադրութիւնն ըստ «Աշխարհացոյց»-ի, էջ 50:

137 Ա. Յակոբեան, Գտչավանքի շինարարական արձանագրութիւնը, 264-266:

© National Library of Armenia


ԳԵՂԱՄԱՅԻ ԾՈՎ
ՓԱՌՆԷՍ
ԳՈՂԹՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐ
ՄԱՍԻՍ
ՄԱՍԻՍ
ՄԱՍԻՍ